Պատգամավոր Հայկ Սարգսյանը պաշտպանության համակարգի թերությունների մասին նամակ է գրել վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանին, վերջինս էլ գրությունն ուղարկել է նախարար Պապիկյանին, որից էլ ստացել է նրա արձագանքը: Ներքին նամակագրությունը հայտնվել է մեր ձեռքում: Այն բավականին ուշագրավ է:

Կարդացեք՝ էջ 4

Ի՞նչ է ասել Փաշինյանը ՆԳ նախարար Արփինե Սարգսյանին, երբ հանձնարարել է պատժիչ գործողություններ իրականացնել «Ուժեղ Հայաստան» ուժի ներկայացուցիչների նկատմամբ, ո՞րն է եղել նրանց նպատակը: Ասել է՝ ցույց տվեք այդ մարդկանց մեր իշխանության ամբողջ ուժը, ճնշեք նրանց «նոր Հայաստանի» ամբողջ հզորությամբ:

Կարդացեք՝ էջ 5

Մեզ համոզում էին, որ դպրոցներում պետք է անբավարար թվանշան չլինի, որ բոլոր երեխաները տեղափոխվեն հաջորդ դասարան: Ովքեր փորձում էին ընդդիմանալ, մեղադրում էին հետամնացության, սովետական մտածողության մեջ: Ի՞նչ տեղի ունեցավ. այս որոշումն ընդունելուց կարճ ժամանակ անց նախարարությունը ետ բերեց հին կարգը:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 35 (4170), 10 մարտ, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը, որ դեռ դեկտեմբերին հայտարարեց «Նոր ուժ» կուսակցությամբ 2026-ի ընտրություններին մասնակցելու մասին, մարտի 7-ին գրեթե գաղտնի համագումար է անցկացրել կուսակցության գրասենյակում՝ այն չի լուսաբանվել, հաղորդագրություն չի տարածվել: Որոշել են առաջիկայում ներկայացնել: «Համագումարի ընթացքում ընտրվել է կուսակցության վարչության նոր կազմը, եւ հաստատվել են նախընտրական ցուցակի առաջին 30 անունները, նաեւ քննարկվել են ծրագրային դրույթներին վերաբերող հարցեր»,- մեզ ասաց կուսակցության մամուլի պատասխանատուն՝ նշելով, որ առաջիկայում միջոցառում են նախատեսել, որի ժամանակ կներկայացնեն նախընտրական ծրագիրը: Ցուցակը գլխավորելու է Մարությանը, «Նոր ուժ»-ը միայնակ է մասնակցելու: Հիշեցնենք, որ Մարությանը քաղաքականությամբ սկսեց զբաղվել 2018-ին. սեպտեմբերին Երեւանի ավագանու «Իմ քայլը» դաշինքի առաջին համարն էր, եւ ընտրվեց քաղաքապետ, սակայն պատերազմից հետո հեռացավ ՔՊ-ից, իսկ 21-ի դեկտեմբերին ավագանին նրան անվստահություն հայտնեց: Նա նախկին թիմակիցներին մեղադրում էր հեղափոխության արժեքներից շեղվելու մեջ: 2023-ին Երեւանի ընտրություններին մասնակցեց «Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակով: Թեեւ ընդդիմադիր ուժերը միասին ավելի շատ ձայն էին ստացել, քան իշխանությունը, սակայն քաղաքապետ դարձավ Տիգրան Ավինյանը:

Պարզվում է՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոցի նախկին տնօրեն Արման Հովակիմյանը, որը մոտ 1 տարի առաջ ազատվեց պաշտոնից, պաշտոնավարման ընթացքում «օրինականացրել» է ծննդօգնության կաշառքը, ծննդկանների հարազատները բժշկին գումարի տեսքով «շնորհակալությունը» հայտնել են հիվանդանոցում տեղադրված տերմինալի միջոցով՝ նշելով ծնունդն ընդունող բժշկի անունը, այսինքն՝ փոխանցում են կատարել: Այս մասին տեղյակ են եղել առողջապահության նախկին եւ ներկայիս նախարարները՝ Արսեն Թորոսյանն ու Անահիտ Ավանեսյանը: Այսօրվա տնօրենը՝ Նարեկ Զեյնալյանը, հավանաբար, որոշել է երեքին միասին «փուռը տալ»: Ասացին, որ վերջին շաբաթներին հարկայինից զանգահարում են տարիներ առաջ ծննդաբերած կանանց եւ համագործակցություն առաջարկում, որ եթե մի քանի տվյալ լրացնեն, իրենց վճարած գումարները հետ կստանան, քանի որ դրանք չեն հասել բժշկին: Թե ուր են գնացել այդ գումարները, եւ ինչպես են հիմա վերադարձնելու, պարզ չէ: Հիվանդանոցից չկարողացանք մեկնաբանություն ստանալ, սակայն ասացին, որ խոսքը 6 տարի առաջվա դեպքերի մասին է:

Ձնագնդի էֆեկտը

Ողբալի վիճակում է հայտնվել իշխանությունը. «հետեւը՝ սուր, առաջը՝ ջուր» վիճակ է: Մի կողմից, պետք է ակտիվ քարոզչություն անի, որ մի քիչ բարձրացնի վարկանիշը եւ հաղթելու շանս ունենա ընտրություններում: Մյուս կողմից՝ ամբողջ 3 ամիս դժվար կլինի, ցուպը ձեռքն առած, մարզից մարզ թրեւ գալը: Եվ արդեն ակնհայտ է, որ այդ «թրեւ գալն» էլ առանձնապես չի բարելավելու վիճակը, որովհետեւ այդ փայտն էլ երկու ծայր ունի: Իհարկե, մարզերում ապրող ժողովրդի մի մասը հուզվում-հալվում է պաշտոնյա եւ հատկապես վարչապետ տեսնելիս: Մի մասն էլ սելֆի-գրկախառնություն-«ջանիդ մեռնեմ»-ներով է դիմավորում, բայց արդեն սկսել են նաեւ շշպռել, հակադարձել: Ինչքան էլ այդ այցելությունները նախապես մարզպետով-համայնքապետով մանրակրկիտ նախապատրաստեն, չեն կարող ամբողջ ընթացքը կանխատեսել: Եվ հազար գրկախառնություն զրոյանում է մի շշպռոցից: Հետո շշպռողներին էլ չեն կարող պատժել. այս փուլում դա ճիշտ չի հասկացվի, ուստի առայժմ «ժողովրդավարի» կերպարի մեջ են մտել, թե տեսմ՝ իր խանութից Փաշինյանին վռնդած մարդուն չկերանք-չհոշոտեցինք, կաթողիկոսի մասին խրատ կարդացող քաղաքացուն բանտ չնստեցրինք, Արցախի մասին խոսողին էլ թողեցինք՝ հանգիստ գնա իր գործերով: Եվ այս պարտադրված դեմոկրատիան իր սեւ գործն անում է՝ ամեն հաջորդ այցելությանը հանդիմանող-քննադատողների բանակը համալրվում է, մարդիկ տեսնում են, որ կարող են նաեւ երկրով մեկ ահուսարսափ տարածած Փաշինյանին քննադատել՝ «որ սատանան այնքան սարսափելի չէ, որքան թվում է»: Եվ այդ պրոցեսը կանգնեցնել չի հաջողվելու: Իսկ խոսքի ազատությունն անխուսափելիորեն բերելու է ընտրության ազատության: Մարդիկ հասկանալու են, որ այդ նույն մարզերում խիստ նվազել է Փաշինյանին պաշտողների ու նրա սրտիկներից հուզվողների թիվը:

Ըստ էության, իշխող ուժը եռամսյա համաժողով է իրականացնում, որի մեկնարկը տրվել է փետրվարի 13-ին, երբ սկսվեց նախընտրական ցուցակի ընտրության առաջին փուլը, իսկ եզրափակիչ արարը նշանակված է ապրիլի 4-ին՝ 3 ամիս անց: Մեր տեղեկություններով, այդ օրը՝ Զատիկի հենց նախօրյակին, ՔՊ-ն հավաքվելու է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, եւ համաժողովը հաստատելու է ընտրական ցուցակի առաջին 50 համարին: Մինչ այդ, երկրորդ փուլով՝ մարտի 27-28-ին, կուսակցության կենտրոնական գրասենյակում կրկին ընտրություն կկատարվի, որի ժամանակ առաջին փուլում ընտրված 50 հոգու միջեւ դարձյալ քվեարկություն կընթանա՝ ցուցակի վերջնական դասավորությունը որոշելու համար:

ՈՎ Է ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ «ՉԱՄԻՉՈՎ ԲՈՒԼԿԻՆ»

Նիկոլ Փաշինյանի՝ Շիրակի մարզ կատարած այցում իբր նախապես չպլանավորված դրվագ կար՝ Գյումրիում շրջելիս նա «հանկարծ» հանդիպեց երիտասարդ երաժիշտների խմբի, որոնք ներկայացան «Չամիչով բուլկի» անունով: Նկատենք, որ իշխանության քարոզիչները Նարեկ Կարապետյանին են «չամիչով բուլկի» ասում՝ գուցե խմբի անունն էլ այդ հեգնանքից է ծնվել: Վարչապետն առանց առարկելու, անմիջապես համաձայնեց այցելել նրանց ստուդիա, ոչ միայն լսեց նրանց կատարումը, այլեւ միացավ խմբին՝ համատեղ կատարելով ՔՊ-ի հիմն դարձած «Ուր որ գնաս, հետդ կգամ» երգը: Ապա առաջարկեց, որ խումբը համագործակցի իր ղեկավարած «Վարչաբենդի» հետ, եւ միասին ելույթ ունենան առաջիկայում: Մենք հետաքրքրվեցինք, թե երբ եւ ինչպես է ստեղծվել «Չամիչով բուլկի» խումբը: Պարզվում է՝ խմբի հիմնադիրը My Lead Time երիտասարդական ՀԿ-ի եւ EthnoRhythm (Էթնոռիթմ) ծրագրի հիմնադիր, երաժիշտ Ժիրայր Մարտիրոսյանն է: EthnoRhythm ծրագիրը ֆինանսավորվում է ԿԳՄՍ նախարարության կողմից: Խումբը բավական նոր է՝ գոյություն ունի ընդամենը շուրջ 8-9 ամիս, բաղկացած է 4-5 երիտասարդ երաժիշտներից: Հիմնականում հանդես է գալիս ռեստորաններում: Նրանց հաճախ կարելի է տեսնել հատկապես «Պոլոզ Մուկուչ» ռեստորանային համալիրում: Ժիրայր Մարտիրոսյանի նախաձեռնությամբ վերջերս բացվել է My Lead Time երաժշտական դպրոցը, որտեղ երիտասարդներին եւ պատանիներին երաժշտական տարբեր գործիքներ՝ հիմնականում կիթառ եւ հարվածային գործիքներ նվագել են սովորեցնում:

ՊԱՐՏՎԱԾ ՄԱՐԴՈՒՆ ՈՉ ՈՔ ՉԻ ՀԱՐԳՈՒՄ, ՈՒԺԵՂԻ ՀԵՏ ԵՆ ՀԱՇՎԻ ՆՍՏՈՒՄ

Հարցազրույց ***Գագիկ Ծառուկյանի*** *հետ*

- Պարոն Ծառուկյան, ես այցելում եմ կուսակցությունների գրասենյակներ՝ հասկանալու, թե ընդդիմության շրջանում ինչ բանակցություններ են ընթանում, արդյոք համախմբման միտումներ կա՞ն, քանի որ թվում է՝ ընդդիմությունը շատ պասիվ է: Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն է ընդդիմադիր դաշտը հիմա՝ ընտրություններից մոտ 3 ամիս առաջ:

- Առաջինը դուք պետք է տեղեկացված լինեք, որ ոչ մի հարց չկա ընդդիմության հետ: Անձամբ ես՝ իմ մասին եմ ուզում ասել, մենք ոչ մեկի հետ բանակցելու բան չունենք: Մենք աշխատում ենք: Այսօր տեսնելով երկրի վիճակը՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական առումով, եւ մեր ազգի վիճակը, ինձ համար շատ ցավալի է, որ մեր երկրում երիտասարդությունը, ժողովուրդը շատ կոտրված, հիասթափված, պարտված վիճակում են: Սա բոլորովին սազական չէ մեր հայ ժողովրդին: Ես ցավ եմ ապրում՝ տեսնելով, որ ամբողջ հայությունն աշխարհով մեկ՝ թե՛ ազդեցիկ մարդիկ, մեծահարուստներ, հայտնի, ճանաչված մարդիկ իրենց կապերով, թե՛ ամբողջ ժողովուրդը, բոլորը նույն վիճակում են: Այսօր ուր գնաք՝ Եվրոպա, Ռուսաստան, ամեն տեղ հայի մեջ կա կոտրվածություն, կա խեղճություն, կա պարտված մարդու հոգեվիճակ: Պարտվածը չի կարող հզոր լինել:

- Այո, դա սազական չէ, բայց երեւի պարտությունից հետո օրինաչափ է:

- Անընդունելի է, որ ամբողջ աշխարհի հայությունը, այդքան կայացած լինելով, այդքան կապեր ունենալով, թույլ տանք, որ մեր ժողովուրդը, մեր երեխաներն այս խեղճացած, պարտված կարգավիճակում լինեն: Ցանկացած իրավիճակում լուծում կա: Եթե մարդը կարողանա ճիշտ կազմակերպել, թիմ ստեղծել եւ ճիշտ ծրագիր իրականացնել, անպայման այդ վիճակից դուրս գալու ճանապարհ կա: Չլուծվող խնդիր չկա:

- Դրա համար ի՞նչ պետք է անել:

- Պետք է աշխատել: Այս ամենը տեսնելով, ուսումնասիրելով, թիմ հավաքելով, քննարկելով՝ մենք աշխատում ենք: Այսօր ոչ թե նստած գեղեցիկ ծրագրեր ենք կազմում՝ աշխատավարձեր, թոշակներ բարձրացնելու մասին, այլ հիմնական խնդիրներին լուծումներ տալու ուղղությամբ թիմեր ենք ստեղծում, առաջարկներ ենք մշակում: Կարող ուժեր ենք հավաքում, որոնք ոլորտ առ ոլորտ հիմնավոր քայլեր են մշակում եւ առաջարկում, որպեսզի հնարավոր լինի լուծել կուտակված խնդիրները: Մենք պետք է այնպես անենք, որ հայ մարդու դարդուցավի լուծումը գտնենք: Մարդը պետք է կարողանա իր աշխատանքով, իր ստեղծածով իր ընտանիքը պահել, իր խնդիրները կարգավորել, իր վարկերը փակել, ապրել այս երկրում եւ չթողնել՝ երկրից գնալ:

- Գեղեցիկ է ասված, բայց այս փուլում երեւի նախընտրական իրավիճակն է առաջնային դառնում:

- Ներողություն, ես գեղեցիկ խոսելու համար չեմ ասում: Նորից եմ կրկնում. ստեղծված իրավիճակը տեսնելով ու պատկերացնելով՝ մենք կոնկրետ գործով ենք զբաղվում: Ես սովորական բանվորի ընտանիքից եմ: Ոչ թե պատահական միլիոնատեր կամ միլիարդատեր եմ դարձել, այլ աշխատանքով. հասկանալով, գիտակցելով, քարը քարի վրա դնելով, առաջ եմ գնացել: Ինչ ասել եմ՝ արել եմ: Չկա մի բան, որ ասած լինեմ ու չանեմ: Ինչ խոստացել եմ՝ իրականացրել եմ: Այսօր էլ մեր հիմնական նպատակն է՝ կյանքի կոչել «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը: Մարդիկ գալիս են, միանում են ծրագրին, ուզում են օգտակար լինել: Բոլորը պետք է գիտակցեն, որ կարեւորը ոչ թե պաշտոնն է, այլ՝ պետությունն ու երկիրը: Կարեւորը ոչ թե դաշինքն ու մանդատն են, այլ՝ արդյունքը: Մենք պետք է միասին լուծենք այդ խնդիրներն այն մարդկանց հետ, ովքեր գիտակից են, փորձ ունեն եւ արդյունք են ցույց տվել: Մարդիկ այսօր ուզում են այլեւս խաբված չլինել:

- Այո, ուզում են խաբված չլինել, բայց ի՞նչ է անում իշխանությունը. ընտրություններից առաջ 10 հազար դրամով բարձրացնում է կենսաթոշակները, եւ 500 հազար կենսաթոշակառուներից շատերն արդեն չեն տեսնում կուտակված մյուս հարցերը, դա ե՞ւս խաբված իրավիճակ չէ:

- Այսօր ցանկացած մարդ, ով էլ լինի, թեկուզ իշխանությունը, եթե ուզում է օգնել իր ժողովրդին, բոլորը պետք է ուրախանան, եթե պետությունն իր ժողովրդի համար լավ բան է արել, պետք է ուրախանալ: Բայց նաեւ պետք է նայել՝ ինչ խոստումներով են նրանք եկել իշխանության, ինչ են խոստացել ժողովրդին: 8 տարի անցել է, այդ խոստումներից ո՞րն է կատարվել: Հիմա նորից գնում են ընտրության: Ի՞նչ են խոստանալու, դրանից ո՞րն են իրականում անելու: Ժողովուրդը շատ լավ հասկանում է: Կեսը վախենում է խոսել, կեսն անկեղծ խոսում է, բայց բոլորը հասկանում են: Ես դա գիտեմ, որովհետեւ օրական 100-500 մարդու հետ եմ շփվում՝ ծառայողների, գյուղատնտեսների, բանվորների, պահակների, ում հետ՝ ասես: Բոլորի կարծիքը գիտեմ: Ժողովուրդն արդեն փորձառու է, գիտակից ու ամեն ինչ շատ լավ հասկանում է:

- Ձեր բարեգործական գործունեության, ինչպես նաեւ Քրիստոսի արձանի շնորհիվ, որը խորհրդանշական է մեր եկեղեցու շուրջ ստեղծված այս իրավիճակում, Ձեր դրական վարկանիշը բավական բարձր է: Դա նախընտրական շրջանում կարող է դուր չգալ իշխանություններին: Հնարավոր համարո՞ւմ եք, որ այս 100 օրվա ընթացքում Ձեր նկատմամբ ճնշումներ կիրառվեն:

- Ամբողջ կյանքում ամեն ինչ տեսել եմ: Սովորական ընտանիքից եմ: Ինչին հասել եմ, ինքնուրույն եմ հասել: Արել եմ, կառուցել եմ, օգնել եմ, կայացրել եմ: Հետապնդումներ էլ ենք տեսել, կալանավորում էլ, բանտում էլ ենք եղել: Մինչեւ այսօր էլ ստուգումներ են անում այն կառույցներում, որոնք տվել եմ կառավարման: Դատական գործընթացներ էլ կան, բայց դա ինձ չի վախեցնում: Օրենքի առաջ բոլորը հավասար են: Եթե խախտում կա՝ մեղավորը պետք է պատժվի: Այնպես որ, ես չեմ վախենում: Ես գիտեմ, որ վատ բան չեմ արել: Կառուցել եմ, օգնել եմ, իմ երկրի պատիվը բարձր եմ պահել: Որքան մարդն անկեղծ է, այնքան Աստված նրան ավելի շատ է տալիս: Ով ինչի արժանի է, Աստված արժանացնում է: Այս փուլում բարեգործություն չենք անում, որովհետեւ օրենքով դա կարող են համարել ընտրակաշառք: Բայց 90-ականներից մինչեւ այսօր արել եմ, անում եմ ու անելու եմ: Այնպես որ, ուզում են ճնշումներ սկսեն-չսկսեն, ես վախեցող չեմ:

- Ձեզ չնեղացրե՞ց այն, որ հրապարակված վերջին հարցումների մեջ՝ ընտրություններում անցողիկ ուժերի շարքում Ձեր անունը չկար:

- Թույլ եւ անվստահ մարդիկ են օդի մեջ թվեր ասում: Ես լիարժեք պատկերն ունեմ: Հարցումներ մենք էլ ենք կատարել, բայց դեռ չեմ ուզում հրապարակել: Ժամանակը կգա՝ ամեն ինչ կերեւա: Ես ուշադրություն չեմ դարձնում: Այդ հարցման արդյունքները դեռ մոտ 20 օր առաջ մեզ հայտնի էին, եւ մեզ դրանց իրական թվերն են հայտնի:

- Ակտիվ ընտրարշավ լինելո՞ւ է, մարզեր գնալո՞ւ եք:

- Մի անհանգստացեք, ամեն ինչ կլինի: 3 ամիս դեռ կա: Մենք չենք շտապում: Մենք վստահ ենք մեզ վրա: Ժողովուրդն իր գնահատականը կտա: Շուտով մեր ծրագրերը կհայտարարվեն, ընտրարշավը կսկսվի, եւ թող նորից նայեն հարցումների արդյունքները՝ մարտի վերջին, ապրիլին, մայիսին:

- Դուք արդեն հայտարարել եք, որ ընտրացուցակում չեք լինելու: Դա չի՞ դժվարացնի Ձեր ընտրողների որոշումը, որոնք ուզենալու են անձամբ Ձեզ ընտրել:

- Ժամանակը կգա՝ այդ մասին էլ կխոսենք: Ես արդեն ասել եմ, որ իմ նպատակը պաշտոնը չէ: Կարեւորը ծրագիրն է, որով ուզում ենք երկիրը դուրս բերել այս վիճակից: Մենք ոչ մեկին չենք վիրավորում, ոչ մեկի վրա ցեխ չենք շպրտում: Յուրաքանչյուրը թող ներկայացնի իր ծրագիրը: Մենք պետք է այնպես անենք, որ ժողովուրդն իր մեջքն ուղղի, դուրս գա խեղճությունից: Թույլ մարդուն ոչ մեկը չի հարգում: Ուժեղի հետ են հաշվի նստում:

- Բայց Դուք խաղաղության կողմնակից եք, չէ՞:

- Բոլորս էլ խաղաղության կողմնակից ենք:

- Իշխանությունն ասում է՝ եթե չընտրվենք, խաղաղություն չի լինի:

- Խաղաղություն պետք է լինի, բայց ոչ թե խոսքի խաղաղություն, ինչպես հիմա է: Այսօր խաղաղություն չկա: Ինչ ասում են, պետք է անե՛նք, ինչ թելադրում են, պետք է կատարե՛նք: 300 հազար ադրբեջանցի պետք է գա, Հայաստանում բնակվի, իսկ մեր փախստական ժողովուրդը՝ իր տները թողած, իրավունք չունի՞: Սա՞ է խաղաղությունը: Խաղաղությունը պետք է լինի երաշխավորված, որպեսզի ժողովուրդը վստահ եւ ապահով լինի:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ալավերդու նախկին փոխհամայնքապետեր՝ ՀԱԿ ներկայացուցիչներ Սասուն Վարդումյանը եւ Արտուշ Աբելյանը, դատի են տվել Ալավերդու ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Ղումաշյանին. վարչական դատարանին խնդրել են վերացնել (անվավեր ճանաչել) Ղումաշյանի կայացրած վարչական ակտերը՝ իրենց աշխատանքից ազատելու մասին: Դատարանը հայցերը բավարարել է: Ալավերդու համայնքապետը բողոքարկել է դատարանի վճիռը, վերաքննիչը մերժել է Ղումաշյանի բողոքը՝ Վարդումյանի մասով: **Սասուն Վարդումյանը** մեզ հետ զրույցում ասաց. «Ալավերդի համայնքի ղեկավարը եւ ավագանին համաձայն չեն դատարանի կայացրած որոշման հետ, երկու ատյանները բավարարել են իմ պահանջը, դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, որից հետո ես հանդիպել եմ համայնքի ղեկավարին, գրավոր դիմել եմ, բայց ինձ մերժում են: Ես գիտեմ, որ իրենք համաձայն չեն: Ստացվում է, որ ՀՀ-ում դատարանից բարձր այլ մարմիններ կան, օրինակ՝ Ալավերդու ավագանին: Ես գիտեմ, որ սա քրեական գործի հիմք է: Մենք երկրորդ անգամ ենք դիմել դատարան, առաջին հայցում ֆինանսական պահանջ չէինք նշել, երկրորդ հայցով ֆինանսական պահանջ ենք ներկայացրել... սպասում ենք երկրորդ վճռին: Եթե չլինի, դիմելու ենք ՄԻՊ-ին, Գլխավոր դատախազությանը, եթե պետք լինի, նաեւ՝ Եվրոպական դատարան»: Իսկ մյուս փոխքաղաքապետի՝ Արտուշ Աբելյանի հայցը բավարարվե՞լ է: «Առաջին ատյանի դատարանը բավարարել է, մյուս կողմը բողոքարկել է Վերաքննիչ դատարան, վերջինս էլ, չգիտես ինչու, գործի դատաքննության ավարտը նշանակել է 2026 թվականի նոյեմբերի վերջին»: Վարդումյանը մեզ պատմեց նաեւ. «Ես եւ ՀԱԿ-ի՝ Թումանյանի տարածքային կառավարման կառույցի ղեկավարը, որը նախկինում քաղաքապետի առաջին տեղակալն է եղել, հանդիպել ենք քաղաքապետին, վերջինս արձագանքեց, որ, այո, կա վճիռ, որի հետ մենք համաձայն չենք, ես իրավաբանների հետ կքննարկեմ, կպատասխանեմ: Տեսա, որ պատասխան չկա, զանգեցի, ինձ ասաց՝ գիտես, մենք որոշել ենք բողոքարկել Գլխավոր դատախազություն: Ասում եմ՝ կա օրինական ուժի մեջ մտած վճիռ, դա պետք է կատարեք, հետո ում ուզում եք, դիմեք՝ ձեր խնդիրն է: Իրենք դրանից հետո նիստ են արել ու որոշել են՝ ինձ գործի նշանակելու փաստաթղթերն ուղարկել դատախազություն՝ իրավական գնահատական ստանալու համար, բայց դա իմ գործի հետ ընդհանրապես կապ չունի»: Ալավերդու համայնքապետ Դավիթ Ղումաշյանը մեզ ասաց, թե իրավական մանրամասներից տեղյակ չէ, սակայն գիտի, որ «որոշումն օրինական ուժի մեջ չի մտել, օրենքի ուժ ստանալու դեպքում դատարանի որոշումը կատարվելու է»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Փաշինյանը հիմա այնքան հակառեյտինգ ունի, որքան ռեյտինգ ուներ 2018-ին

Նիկոլ Փաշինյանից ու ՔՊ-ական իշխանությունից դժգոհությունն օրեցօր ուժգնանում է: Եվ չնայած Փաշինյանը եւ նրա թիմը երջանիկ են Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) հարցումների ներկայացրած արդյունքներից, ըստ որոնց՝ իրենց վարկանիշը 18 տոկոս է, բայց անգամ այդ թիվը մի բանի մասին է փաստում՝ հայ հանրությունը մերժում է Փաշինյանին: Գաղտնիք չէ, որ Փաշինյանն ու ՔՊ-ն արդեն վաղուց տվել են նախընտրական քարոզարշավի մեկնարկը, ավտոբուսով տարբեր մարզեր են այցելում, էժանագին ներկայացումներ բեմադրում, օրինակ՝ արցախցի կնոջն է օգնում՝ գնումները տուն հասցնել, «կուկուռուզ ու պեռաշկի» են ուտում, քաղաքացիներին խոստումներ են տալիս եւ այլն, բայց մի բան ակնհայտ է՝ Նիկոլ Փաշինյանից այնքան դժգոհ են, որ անգամ վախը չի խանգարում, որ նրան դեմառդեմ քննադատեն, թույլ չտան իրենց օբյեկտ մտնել, հանդիմանեն, որ Վեհափառին է ուզում ազատել՝ կարծես նա իր նշանակած նախարարն է:

Քաղաքագետ **Հակոբ Բադալյանը**, «Հրապարակ»-ի հետ զրույցում խոսելով ստեղծված իրավիճակի մասին, ասում է. «Այն, ինչ կա այսօր, 2018 թվականի հետ համեմատելն ուղղակի ավելորդ է՝ այն ժամանակ Փաշինյանի ընկալումը, նրանից սպասումները, հասարակական տրամադրությունները լրիվ այլ էին, քանի որ իրավիճակն էլ լրիվ այլ էր, եւ այսօրվա հետ համեմատության եզրեր գտնելն ուղղակի անհնարին է: Անգամ 2022-2023 թվականների հետ չենք կարող համեմատել այսօրվա պատկերը: Նիկոլ Փաշինյանը մոտենում է այնպիսի հակառեյտինգի ցուցանիշի, որքան ռեյտինգ ուներ 2018-ին: Եվ սա, իհարկե, նկատվում է թե՛ նրա գործողություններից, թե՛ նրա վարքագծից: Առհասարակ, իշխանության վարքագծային ռեժիմից այդ ամենը զգացվում է: Ինչ վերաբերում է մարզեր կատարած այցերին, ապա, օրինակ, Արտաշատում տեղի ունեցած դեպքը, երբ քաղաքացին չթողեց նրան խանութ մտնել, իմ գնահատմամբ՝ բավականին անսպասելի էր ընդհանուր պրոցեսի տրամաբանության մեջ: Դրան հաջորդած այցերը, որոնք, չգիտես ինչու, ներկայացվում են ներկուսակցական այցեր, սակայն բացարձակապես նախընտրական քարոզարշավներ են, նկատելիորեն ավելի բծախնդրորեն էին կազմակերպված, որպեսզի հնարավորինս նման անակնկալներից խուսափեն: Բայց անգամ այդ դեպքում արձանագրվում են նման պատկերներ, ինչը վկայում է իրավիճակի տարբերության մասին: Անգամ բավականին մանրակրկիտ եւ նույնիսկ որոշակի իմաստով բեմադրված հանդիպումների, շփումների պարագայում, երբ բծախնդրորեն են կազմակերպվել այդ այցերը, տեղի են ունենում իրականության ճեղքումներ: Նկատելի եւ ակնհայտ է, որ հանդիպումներից առաջ սցենար է մշակվում, դերեր են բաշխվում, եւ այդ արցախցի կնոջ մասնակցությամբ դեպքը հենց այդ շարքից էր: Նպատակային փորձել էին սիմետրիա ստանալ: Քանի որ համացանցում տեղեկություններ շրջանառվեցին, որ արտաշատցի խանութպանն արցախցի է, որոշեցին մեկ այլ արցախցու հետ ստեղծել սիմետրիա»:

Ցեղասպանության թանգարանի եւ տնօրենի ճակատագիրը կվճռվի այսօր

ՀԱՅՏՆՈՒՄ

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի եւ աշխատակազմի համար այսօր վճռորոշ օր է լինելու՝ կամ կընդունեն հիմնադրամի տնօրեն Էդիտա Գզոյանի դիմումը՝ աշխատանքից ազատվելու վերաբերյալ, կամ կոլեկտիվի բարձրացրած աղմուկն ու պայքարն իրենց դերը կխաղան, եւ կհրաժարվեն որոշումից: Հիշեցնենք, որ օրեր առաջ ԿԳՄՍ նախարարը պարտադրել էր Ցեղասպանության թանգարանի տնօրենին՝ դիմում գրել, ազատվել աշխատանքից՝ սպառնալով, որ եթե ինքնակամ չգրի, իրենք կազատեն: Նախարարությունից, ըստ լուրերի, պաշտոնական պատճառաբանությունը եղել էր այն, թե իբր Գզոյանը պատշաճ չի վերահսկում Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի շինարարությունը, որը, ի դեպ, վերջինիս ֆունկցիաների մեջ չի մտնում: Իրական պատճառը, սակայն, տիկնոջ քիչ թե շատ ազգային գործունեությունն է. Գզոյանը միջազգային հարթակներում ակտիվ է ցեղասպանության ճանաչման, գիտական հոդվածների տպագրման ուղղությամբ, ինչն այս իշխանությունների սրտով չէ: Գրել էինք նաեւ, որ Գզոյանի ազատման հարցը հատկապես հասունացել է ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի՝ Հայաստան այցից եւ Ցեղասպանության հուշահամալիր այցելելուց հետո, երբ ավելի ակնառու դարձավ այս իշխանության ապազգային դեմքը, քանի որ ԱՄՆ բարձր պաշտոնյային ՀՀ իշխանություններից որեւէ պաշտոնյա չուղեկցեց, Ժաննա Անդրեասյանը ձեւական դիմավորեց համալիրի մուտքի մոտ ու անհետացավ: Թերեւս սրանք վախենում են, որ իրենց թուրք բարեկամներին կնեղացնեն, եթե ցեղասպանության փաստը հիշատակեն եւ իրենց հյուրերին տանեն Ծիծեռնակաբերդ: ԱՄՆ փոխնախագահին եւ նրա կնոջն Էդիտա Գզոյանն էր Հայոց ցեղասպանության հուշահամալիր ուղեկցել ու մանրակրկիտ պատմել ինչպես ցեղասպանության, այնպես էլ Արցախի մասին: Վերջում էլ Արցախին ու ցեղասպանությանը վերաբերող գրքեր էր նվիրել, ինչից էլ կատաղել էին ապազգային ՔՊ-ականները:

Այդուհանդերձ, անցած շաբաթ տնօրենը հակված է եղել Անդրեասյանի հորդորով դիմում գրել, բայց կոլեկտիվն ընդվզել է՝ նամակ են ուղղել վարչապետին, թե որն է պատճառը, ինչու եք հերթական անգամ տնօրեն փոխում թանգարան-ինստիտուտում: Նամակը վարչապետի գրասենյակից վերահասցեագրվել է ԿԳՄՍ նախարարին: Մեր տեղեկություններով, այս օրերին իր լիազորությունները վայր է դրել նաեւ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ռայմոնդ Գեւորգյանը՝ սփյուռքահայ հայտնի ցեղասպանագետը: Կոլեկտիվում մոտ մեկ շաբաթ է՝ աշխատանքը կաթվածահար է, չնայած Գզոյանն աշխատակազմին հորդորել է բնականոն հունով աշխատել, սակայն մեզ ասացին, որ նրա հեռացումը շատերի համար ճակատագրական նշանակություն կունենա՝ տնօրենի քայլին ուրիշ մասնագետներ էլ կհետեւեն՝ հասկանալով, որ թանգարանը գոյատեւելու հեռանկար չունի, եթե ՔՊ-ն առաջիկայում վերարտադրվի:

Մեզ պատմեցին, որ պաշտոնավարման կարճ ժամանակահատվածում Գզոյանը բավականին շատ դրամաշնորհային ծրագրեր է բերել հիմնարկի համար, ինչի շնորհիվ մեծ ծավալի աշխատանք է իրականացվել, եւ գիտաշխատողներն էլ բավական բարձր՝ մոտ 500 հազար դրամ աշխատավարձ են ստացել, տարբեր երկրներում սեմինարների են մասնակցում, այս պահին էլ կան ընթացիկ ծրագրեր, որոնք անձամբ Գզոյանի անձով են պայմանավորված եւ կարող են դադարեցվել, եթե նա հեռացվի պաշտոնից: Մի վտանգավոր սցենար էլ է նշմարվում. Գզոյանից ազատվելուց հետո, մեծ հավանականությամբ, հիմնադրամը տեւական ժամանակ անգլուխ կթողնեն, հուշահամալիրում իրականացվող շինաշխատանքներն էլ կդադարեցվեն հենց այդ հիմնավորմամբ, ու որոշ ժամանակ անց կփակեն ինստիտուտի դռները:



Հիշեցնենք. Գզոյանը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն է ընտրվել 2024-ի փետրվարին, նա պատմական գիտությունների թեկնածու է, 2013-2018 թթ.՝ ՀՑԹԻ ավագ, 2018-ից առաջատար գիտաշխատող է եղել, իսկ 2018-ից՝ ՀՑԹԻ գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն: Տնօրենի պաշտոնը 2018-ից զբաղեցնում էր Հարություն Մարությանը, նրանից առաջ եղել է Հայկ Դեմոյանը:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

«Արեւմտյան Ադրբեջանի» վարչապետը լինելու համար են պայքարում

Նախընտրական ոչ պաշտոնական քարոզարշավը շարունակվում է, իշխանությունները շաբաթ-կիրակի օրերին «ուրախ ավտոբուսով» տարբեր մարզեր են այցելում եւ քարոզչություն անում, սակայն Փաշինյանից ու ՔՊ-ից դժգոհության ալիքն այնքան է ուժգնացել, որ մարդիկ սկսել են իրենց դժգոհությունն ուղիղ Փաշինյանին ասել: Զրուցել ենք քաղաքագետ **Անդրիաս Ղուկասյանի** հետ:

- Իշխանությունը մարզեր է այցելում, արդեն նախընտրական քարոզարշավ է իրականացնում, ուղիղ եթերում տեսնում ենք՝ մարդիկ մոտենում են Փաշինյանին, կշտամբում, նախորդ շաբաթ Արտաշատում մի վաճառական թույլ չտվեց, որ իր խանութ մտնի, անցած շաբաթ Մարալիկում եւ Գյումրիում էին քննադատում:

- Պարբերաբար քննարկումների եմ հանդիպում՝ այդ պրոցեսների հետ կապված, բայց, իմ կարծիքով, այստեղ ոչ մի նոր բան չկա: Փաշինյանից հիասթափվածների թիվը վաղուց է մեծացել, ինչ վերաբերում է քարոզարշավին, յուրաքանչյուր ուժ իրեն հասանելիք գործողություններն է կատարում, իսկ Փաշինյանը փորձում է հնարավորինս կոմֆորտ զոնայում տեղավորել իրեն եւ նախընտրական ակտիվություն ցուցադրել:

- Բայց արդյո՞ք նոր բան չէ, որ մարդիկ Փաշինյանին դեմառդեմ ամոթանք են տալիս եւ վռնդում:

- Ինձ համար նորություն չէ: Նոր երեւույթն այն է, որ արդեն այդ ամենը մեդիայում է հայտնվում: Ընտրություններին ընդառաջ, միշտ էլ լինում են դեմ եւ կողմ մարդիկ: Սակայն հատկանշական է, որ արդեն իսկ այդ երեւույթները մեդիայում են հայտնվում, առաջներում էլ, վստահաբար, եղել են նման միջադեպեր, սակայն դրանք ինչ-ինչ պատճառներով եթերներում չեն հայտնվել:

- Իսկ ի՞նչ կարծիք ունեք ընդհանուր նախընտրական պրոցեսների մասին: Ակտիվացել է թե՛ իշխանությունը, թե՛ հիմնական ընդդիմադիր դաշտը:

- Գլոբալ առումով ընտրությունների օրակարգը, ըստ իս, այն է, թե ով է լինելու «Արեւմտյան Ադրբեջանի» վարչապետը: Պայքարը դրա շուրջ է: Բոլոր ուժերն ընդունում են 2025-ի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում նախաստորագրված անարդար ու հակահայ պայմանագիրը: Ինձ հատկապես մտահոգում է այն կետը, որի համաձայն՝ միջազգային ատյաններից դատական հայցերը հայկական կողմը հետ է վերցնում, խոսքն Արցախի մասին է: Արցախի հայերի դեմ տեղի է ունեցել մեծ հանցագործություն, մարդիկ դուրս են վռնդվել իրենց տներից՝ հայրենիքից, սակայն հիմա փաստացի Հայաստանն իր ձեռքերը լվանում է այդ ամենից եւ միջազգային հայցերից հրաժարվում է: Իլհամ Ալիեւը փաստացի միջազգային պատասխանատվությունից խուսափում է, իսկ դրան նպաստում են ՀՀ իշխանությունները: Միջին մտավոր կարողությունների տեր մարդը, որ հետեւում է այս պրոցեսներին եւ ունի արժանապատվության չնչին զգացում, չի կարող նման «խաղաղության պայմանագրից» երջանկանալ եւ դեռ մի բան էլ աջակցել իշխող ուժին: Իհարկե, մենք՝ բոլորս ենք խաղաղություն ցանկանում, բոլորս ենք ուզում, որ տարածաշրջանում բնականոն կյանք հաստատվի, եւ ավարտվի այս ազգամիջյան հակամարտությունը, սակայն ո՛չ կապիտուլյացիայի եւ անարդարության գնով: Նման պայմաններում թեպետ առաջնային պատասխանատուն իշխանությունն է, սակայն ես կարծում եմ, որ ընդդիմադիր ուժերն էլ ունեն իրենց պատասխանատվությունն այս գործում: Այնուամենայնիվ, Սամվել Կարապետյանը, ըստ հարցումների, հանրության շրջանում դիտվում է մի գործիչ, որը կապ չունի արցախյան կեղտոտ խաղերի հետ, ներքաշված չի եղել այդ պրոցեսներում, եւ հենց այդ պատճառով էլ նա կարող է լինել այն ընդդիմադիր առաջնորդը, որը կպայքարի Նիկոլ Փաշինյանի դեմ:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՊՆ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԳԱՂՏՆԻ ՆԱՄԱԿԸ ՊՆ-ԻՆ ԵՎ ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Գաղտնիք չէ, որ իշխանության ներսում դժգոհություն է կուտակվել պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի եւ նրա անձնակազմի՝ տեղակալների, բանակի գեներալների հանդեպ: Օրերս «Հրապարակին» հասանելի դարձավ ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանի եւ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի ներքին նամակագրությունը, որը դրա վկայությունն է: Նամակագրությունը նրանք վարել են անցյալ տարեվերջին, կառավարության աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի միջոցով: Աշխատակազմի ղեկավարը ՊՆ-ում տիրող թերությունների վերաբերյալ գրությունը ստացել է Հայկ Սարգսյանից, ուղարկել է նախարարին, որից էլ ստացել է նրա արձագանքը: Հայկ Սարգսյանը մատնանշել է ավելորդ ու ժամանակատար թղթաբանությունը, ՊՆ շենքում բազմաթիվ գնդապետների կատարյալ անգործությունը, այն, որ զինվորական համազգեստը, որը դեռ 2022 թվականից խոստացել էին փոխել, բայց այդպես էլ չեն փոխել, մրցույթների ընթացակարգի թերությունները, գաղտնիության սկզբունքի չարաշահումը, որի արդյունքում անգամ ատամի մածուկի կամ վաքսի անհրաժեշտ քանակը կարող է պետական գաղտնիք համարվել:

«Մենք ունենք կառավարման արագության անկում՝ մեծամասամբ պայմանավորված գաղտնիության ռեժիմի գերարժեւորման հետ: Նոր համազգեստի, սննդի մատակարարման եւ այլ մրցույթների կազմակերպումը մեզնից պահանջում է տարիներ: Գաղտնիության հետ կապված հիմնական խնդիրներն են.

1. Սահմանափակ թվով կազմակերպություններ են տեղյակ լինում եւ մասնակցում մրցույթներին: Մասնակիցների փոքր թվով պայմանավորված, մրցույթները լինում են պակաս մրցակցային՝ ունենում ենք ֆինանսական միջոցների կորստի ռիսկեր:

2. Թղթաբանությունը եւ բուն մրցույթի ընթացքը դանդաղում են՝ ցանկալի նպատակին հասնում ենք շատ ավելի ուշ, քան մեզ անհրաժեշտ է, եւ ժամանակն սկսում է մեր դեմ աշխատել:

3. Դանդաղելով ունենում ենք ֆինանսական միջոցների կորուստ եւ որակապես ավելի ցածր գնումներ, քանի որ մեկ անձից գնումներ կատարելիս գինը լինում է ավելի բարձր՝ մրցույթի արդյունքներով ձեւավորվող գնից, իսկ որակը՝ ավելի ցածր»,- գրում է Հայկ Սարգսյանը, եւ նրա հետ դժվար է չհամաձայնելը:

Ըստ նրա, գաղտնիության ռեժիմը բերում է նրան, որ որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը հասանելի է դառնում օրերի ընթացքում՝ այն դեպքում, երբ այն կարող է հասանելի լինել նույն պահին, բայց ՊՆ աշխատակիցներին արգելվում է օգտագործել համակարգիչներ եւ օգտվել համացանցից: Եվ սա՝ այն դեպքում, երբ «հակառակորդը հեշտությամբ կարողանում է դիտարկել եւ տեղորոշել մեր զորամասերը, զինտեխնիկան, մարտական դիրքերն ու դրանց սնուցման ճանապարհները»: Ո՞ւմ է պետք նման գաղտնիությունը, որը միայն խնդիրների է հանգեցնում:

«ՊՆ շենքում անձամբ եմ մտել բազմաթիվ գնդապետների աշխատասենյակներ եւ հայտնաբերել, որ նրանք մատնված են կատարյալ անգործության: Չի կարող վարչական շենքում աշխատող բարձրաստիճան զինվորականը կամ որեւէ այլ պաշտոնյա արդյունավետ աշխատել առանց համակարգչի: Պետք է անհապաղ քննարկել վարչական շենքում աշխատող զինվորականների մեծ մասին այլ ծառայության վայրեր տեղափոխելու հարցը՝ հաշվի առնելով հատկապես սահմանային զորամասերում սպայական անձնակազմի թերի եւ ոչ պատշաճ որակավորում ունեցող կադրերով համալրվածությունը»,- գրում է ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Հայկ Սարգսյանը: ՊՆ շենքում, նույն շրջայցի ժամանակ նա «համատարած անգործության ֆոնին» տեսել է հազվագյուտ պաշտոնյաների, որոնք աշխատում են գերբեռնված, օգտագործում են միաժամանակ երկու համակարգիչ, որոնցից մեկն անձնական նոութբուք է՝ աշխարհի հետ կապ պահելու համար:

Պաշտպանության նախարարը մեծ մասամբ ընդունում է պատգամավորի նշած խնդիրները, որոնք, ըստ նրա, «խորնիկ բնույթ ունեն», դրանք արդեն ներկայացված են «Բանակի կերպափոխման հայեցակարգում»: Բայց անձնակազմի անգործության մասին պնդումը չի ընդունում: «ՊՆ-ում համակարգիչներից եւ համացանցից օգտվելու արգելքի, ինչպես նաեւ ՊՆ շենքում բազմաթիվ գնդապետների կատարյալ անգործության մասին պնդումներն առնվազն չափազանցված են»,- պատասխանում է Արայիկ Հարությունյանին: Բանակում հաստիքացուցակն ու վարձատրությունը բարելավվում են, ներքին փաստաթղթաշրջանառության թվայնացումը, որի բացակայության համար նրան մեղադրում է Հայկ Սարգսյանը, նույնպես ընթացքի մեջ է, իսկ գաղտնիության հետ կապված՝ «մեղավոր» է օրենքը, որը պետք է փոխվի: «Բարձրաձայնված խնդիրները մեծապես գտնվում են ոչ թե գնումների, այլ գաղտնիության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության տիրույթում»,- գրում է նախարարը:

Նա ընդունում է, որ մեթոդաբանության բացակայության պատճառով գնումների պլանում առանձին դեպքերում ներառվում են այնպիսի ապրանքներ, աշխատանքներ եւ ծառայություններ, որոնք առերեւույթ գաղտնիք չեն պարունակում, բայց գաղտնիության հետ կապված օրենսդրությունն այնքան լայն է, որ ՊՆ-ի հետ առնչվող ցանկացած գնման առարկա կարող է գաղտնի համարվել: «Պետական գաղտնիք պարունակող գնման գործընթացների մասով առկա է խնդիր, քանի որ, «Պետական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն, պետական գաղտնիք պարունակող գնումների հրավերը պետք է տրամադրվի միայն գաղտնիության գործավարություն իրականացնելու թույլտվություն ունեցող մասնակիցներին, ինչը նշանակում է, որ այդ մասնակիցների մոտ պետք է առկա լինի ռեժիմային գաղտնի մարմին: Սակայն ներկայում գնման ընթացակարգերին պոտենցիալ մասնակից կազմակերպությունների գերակշիռ մասը չունի ռեժիմային գաղտնի մարմին, ինչը նշանակում է, որ մի շարք գնման գործընթացներ հնարավոր է չկայանան՝ առաջացնելով ապահովման խնդիր»,- արդարանում է Պապիկյանը:

ՀԳ. *Լուրերը, թե պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանից ոչ բոլորն են գոհ, վաղուց են սպրդում կառավարությանը մոտ շրջանակից: ՔՊ-ականները նրան դատապարտում են դանդաղկոտության, զինված ուժերի համար ստեղծված հնարավորությունները չօգտագործելու հարցում: Իշխանական շրջանակներում կարծիք կա, որ քաղաքական իշխանությունը վերջին 3 տարում բանակի համար զգալի թե՛ ֆինանսական ռեսուրսներ է ստեղծել, թե՛ միջազգային կապեր՝ ամերիկացիների, անգլիացիների ու ֆրանսիացիների, հնդիկների ու չինացիների հետ: Այդպիսի հնարավորություններ բանակը երբեք չի ունեցել, բայց վատ կառավարման արդյունքում ՊՆ-ն չի կարողանում իրացնել այդ հնարավորությունները: Կատարվել է հսկայական աշխատանք, որը, սակայն, չի համապատասխանում ՊՆ-ի աշխատանքային տեմպին: ՊՆ-ն փղի դանդաղկոտությամբ, հանգիստ ու դինջ, իր համար ապրում է՝ այնպիսի տեմպով ու ոճով, որը չի համապատասխանում այսօրվա իրավիճակին: Անգամ շքերթը, որը տեղի է ունենալու մայիսի 28-ին, ցուցադրելու է պետության, իշխանությունների ձեռքբերումը եւ միտված է լինելու նախընտրական քարոզչությանը, բայց ոչ բանակի ուժին ու կայացմանը: Եվ այս կարծիքը եւս տարածված է կառավարությանը մերձ շրջանակներում:*

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՀԵԾԱՆԻՎԸ ՄՈՌՅԱՆՔ, ԾՐԱԳԻՐԸ ՉԱՇԽԱՏԵՑ

«Կուկուռուզ-պեռաշկի-սուջուխ» օպերացիայից առաջ Փաշինյանը հանրությանը զբաղեցնում էր հեծանվավազքով՝ օրական 20-30 կիլոմետր ճանապարհ էր անցնում. նրան մեկ կարելի էր տեսնել Դիլիջանի ոլորաններին, մեկ՝ Երեւանի մատույցներում, մինչեւ անգամ Բեռլինում ու Լոնդոնում էր հեծանիվ վարում: «Հեծանիվը ցավ է, որ պետք է հաղթահարես»,- կատակում էր Փաշինյանը: Փաշինյանի՝ հեծանիվ վարելու ակտիվ շրջանում սկսվեց հանրակրթական ուսումնական հաստատություններին հեծանիվների տրամադրումը, 2024-ից սկսվեց դպրոցականների համար ՀՀ վարչապետի գավաթի համար խճուղային հեծանվավազքի մրցաշարերի անցկացումը: ԿԳՄՍ նախարարությունը շրջանառության մեջ դրեց ծրագիր՝ հանրության շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման եւ երթեւեկության այլընտրանքային ձեւերի խթանման միջոցառումների անցկացման մասին, որն ուղղված է հեծանիվները՝ որպես երթեւեկության միջոց, առավել ակտիվ օգտագործելուն:

Ծրագրի շրջանակներում ուսումնական հաստատությունների ուսանողները, աշխատակիցները եւ նրանց ընտանիքի անդամները հնարավորություն կունենան վարկով հեծանիվ ձեռք բերել, իսկ վարկերի տոկոսադրույքները պետությունը կսուբսիդավորի, քանի որ դա նպաստում է «հանրության շրջանում ֆիզիկական առողջ ակտիվության բարձրացմանը, հանրային երթեւեկության այլընտրանքային ձեւերի զարգացմանը»:

Նախագծից 1 տարի անց գրավոր հարցում ուղարկեցինք ԿԳՄՍՆ, որպեսզի տեղեկանանք, թե նշված ծրագրի շրջանակներում որքան արժե 1 հեծանիվը, եւ հեծանիվ ձեռք բերելու համար մինչ օրս քանի անձ է դիմել՝ այդ ծրագրից օգտվելու: Նախարարությունից պատասխանել են. «Հեծանիվի, ներառյալ հեծանիվի հետ միաժամանակ գնվող սաղավարտի, ծնկների բարձիկների եւ ձեռնոցների գնման համար տրամադրվող վարկի գումարը կարող է կազմել մինչեւ 300 հազար դրամ՝ հիմք ընդունելով 2025 թ. մարտի 27-ի 341-Ն որոշումը: Միաժամանակ հայտնում ենք, որ 2025-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը կնքել է պայմանագրեր՝ հետեւյալ բանկերի հետ. «Էվոկաբանկ» ԲԲԸ, «Ֆասթբանկ» ՓԲԸ, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ եւ «Յունիբանկ» ԲԲԸ»:

Քանի որ նախարարությունից չպատասխանեցին, թե քանի անձ է դիմել ծրագրից օգտվելու համար, ուստի հարցումներ ուղարկեցինք նաեւ բանկերին, որոնց հետ նախարարությունը պայմանագիր է կնքել: Խնդրեցինք պատասխանել, թե քանի անձ է դիմել բանկ: «Հայէկոնոմբանկ»-ից հայտնեցին, որ հայցվող տեղեկությունը Բանկի ներքին գաղտնի տեղեկատվություն է, եւ իրենք իրավասու չեն տրամադրել: «Ֆասթբանկ»-ից պատասխանեցին, որ ԿԳՄՍՆ-ի հետ համագործակցության շրջանակներում հեծանիվների եւ համապատասխան պարագաների ձեռքբերման վարկավորման ծրագիրը դեռ չի մեկնարկել, հայտերը դեռ չեն ընդունվում, հետեւաբար, շահառուների վերաբերյալ տվյալներ չկան, եւ ծրագիրը նախապատրաստական փուլում է: «Էվոկաբանկը» մեր հարցմանը չպատասխանեց:

Նկատենք, որ հեծանիվ վարողներն ասում են, որ ոչ Երեւանում, ոչ մարզերում հեծանվային ուղիների բացակայության պատճառով խիստ վտանգավոր է հեծանիվ վարելը, եւ անգամ հեծանիվ ունեցողները խուսափում են այն որպես փոխադրամիջոց օգտագործելուց: Օրինակ, Երեւանում հեծանիվ վարելու համար պետք է Փաշինյանի թիկնազորը նախապես ճանապարհ բացի եւ երթեւեկությունը կանգնեցնի, որ անփորձանք մի քանի կիլոմետր վարես:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐ

ԱՄԵՆԱԼԱՎ «ՍՈՑԻՈԼՈԳԻԱՆ» ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆ Է՝ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՅՑԻ ԵՎ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԻՋԵՎ

Բոլոր նրանք, ովքեր դեռ հավատում են, որ Նիկոլ Փաշինյանը պատրաստ է ազատ եւ մրցակցային ընտրություններ կազմակերպել, պետք է տեսնեն, թե ինչ է տեղի ունենում, երբ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչներն այցելում են մարզեր: Մարտի 7-ին Երեւանից վերադառնում էի Արմավիր, Մեծամոր եւ Արմավիր քաղաքների միջեւ ընկած ընդամենը 6 կիլոմետրանոց հատվածում հաշվեցի ոստիկանության պարեկային ծառայության կողմից կանգնեցված 5-ից ավելի ավտոբուս եւ նույնքան էլ մարդատար մեքենա: Հետո պարզեցի, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունն Արմավիր քաղաքում այդ օրը բացում էր իր կենտրոնական գրասենյակը, եւ դրանք կուսակցության անդամներին եւ համակիրներին Արմավիր տանող ավտոբուսներն ու մեքենաներն են: Ոստիկանությունը ցուցադրաբար հետապնդում եւ կանգնեցնում էր մեքենաները, խոչընդոտում մարդկանց ազատ տեղաշարժը՝ միայն այն պատճառով, որ նրանք Փաշինյանի քաղաքական հակառակորդներն են, պայքարում են Հայաստանը փաշինյանական ռեժիմից ազատագրելու համար:

Ինչ է ասել Փաշինյանը ՆԳ նախարար Արփինե Սարգսյանին, երբ հանձնարարել է պատժիչ գործողություններ իրականացնել «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչների նկատմամբ, ո՞րն է եղել նրանց նպատակը: Ասել է՝ նախարար Սարգսյան, ցույց տվեք այդ մարդկանց մեր իշխանության ամբողջ ուժը, ճնշեք նրանց «նոր Հայաստանի» ամբողջ հզորությամբ: Արփինե Սարգսյանն ասել է, որ այդ առաջադրանքը կկատարի բարձր մակարդակով, հետո մտածել է, թե ինչպես ցույց տա իրենց իշխանության ամբողջ հզորությունը, եւ հանձնարարել է պարեկային ծառայության ղեկավարին՝ ճանապարհի այդ հատվածում կենտրոնացնել որքան հնարավոր է մեծ թվով պարեկային ծառայության մեքենաներ, ցուցադրաբար հետապնդել եւ հերթով կանգնեցրել է այդ միջոցառման մասնակիցների մեքենաները, որ ոչ միայն իրենք, այլեւ այդ ճանապարհով անցնող մարդիկ տեսնեն, թե ինչպիսի ուժ ունեն իրենք, որ կարող են բոլորին զրկել մեքենա վարելու հնարավորությունից, որտեղ ուզենան, կանգնեցնեն մեքենաները, տուգանքներ գրեն: Փաշինյանն ուզում է մարդկանց մոտ վախ ներշնչել, բայց վախի փոխարեն միայն զզվանք է առաջացնում:

Մարդը, որը չի հանդուրժում մարդկանց ազատ տեղաշարժի սահմանադրական իրավունքը, չի կարող հանդուրժել նաեւ մարդկանց ազատ ընտրության իրավունքը: Միակ տարբերությունն այն է, որ մի քանի տասնյակ մեքենաների եւ մի քանի հարյուր մարդկանց ազատ տեղաշարժի իրավունքը խոչընդոտելու համար կարող են կենտրոնացնել ոստիկանական ուժեր, բայց միլիոնից ավելի ընտրողների ազատ կամարտահայտությունը դժվար է ոստիկանական ուժերով խոչընդոտել, Փաշինյանը չի կարող ամեն տան կամ շենքի մուտքի մոտ մի ոստիկան կամ պարեկային ծառայության մեքենա կանգնեցնել, որ դրանք մարդկանց թույլ չտան տնից դուրս գալ, գնալ ընտրատեղամաս եւ քվեարկել իրեն իշխանազրկելու համար: Փաշինյանն իր գործողություններով ցույց է տալիս, թե որքան խղճուկ եւ վախեցած է, որ իր բռնապետական հանցախմբի միակ հույսը մնացել են մի քանի հարյուր կամ հազար ոստիկանները: Սա տեսնում եւ հասկանում են նույն ոստիկանները, նույնիսկ՝ Փաշինյանի ամենամոլեռանդ պաշտպանները: Վախեցնելու փոխարեն ի ցույց են դնում իրենց վախեցած վիճակը:

Թե ով է Հայաստանի հիմնական ընդդիմադիր ուժը, ով է իշխանության հիմնական ահուսարսափը, երեւաց ոչ միայն այդ ոստիկանական միջոցառումից, այլեւ «Ուժեղ Հայաստան» կուսակցության կենտրոնական գրասենյակի մոտ հավաքված մարդկանց բազմությունից: Ես մասնակից եմ եղել վերջին 36 տարիներին տեղի ունեցած բոլոր համապետական ընտրություններին եւ նախընտրական շրջանում ընդդիմադիր կուսակցությունների գրասենյակների մոտ հավաքված մարդկանց բազմությունից կարող եմ հասկանալ, թե ում են մարդիկ համարում իշխանության հիմնական մրցակից, որ ուժի հետ են կապում փոփոխությունների հույսը: Դա հնարավոր չէ բեմականացնել, հնարավոր չէ փողով կամ պարտադրանքով մարդկանց հավաքել: Եթե այդպես լիներ, Փաշինյանը եւ նրա իշխանությունը բոլորից շատ փող ու վարչական լծակն ունեն, բայց նույնիսկ Փաշինյանին եւ նրա իշխանության ներկայացուցիչներին չի հաջողվում փողով եւ լծակներով այդքան մարդկանց կաշառել կամ նրա հետ հանդիպումներին բերման ենթարկել:

Հիմա ամենաշատ քննարկվող հարցը սոցիոլոգիական հարցումներն են, տարբեր ուժերի կամ անձանց ունեցած վարկանիշները: Վերցրեք մեկ շաբաթ առաջ Փաշինյանի՝ Արմավիր կատարած այցի տեսագրությունը եւ համեմատեք «Ուժեղ Հայաստան» կուսակցության գրասենյակի բացման

միջոցառման տեսագրության հետ, համեմատեք մասնակիցների թիվը, եւ դա կլինի ամենալավ, ամենաազնիվ սոցիոլոգիական հարցումը: Փաշինյանի ռեժիմն անդառնալիորեն կարցրել է հանրային աջակցությունը եւ, ինչպես ամեն մի բռնապետ, մնացել է վախ տարածելու ու ապօրինություն գործադրելու հույսին: Ինչպիսի՜ ողորմելի վախճան:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԹՐԱՄՓԻ ՀԵՏ ԿԱՄ ԹՐԱՄՓԻ ՎՐԱ

Ես չեմ զարմանա, եթե ամերիկա-իրանական այս պատերազմից հետո ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարի, որ իրեն հաջողվեց եւս մեկ պատերազմ դադարեցնել: Խաղաղարար մարդու մասնագիտությունն է՝ դադարեցնել պատերազմները: Իսկ եթե պատերազմ չկա, ի՞նչ անի այդ մարդը, հո անգործ չի՞ մնալու: Եղածը երկու հրթիռ չի՞… Արձակում ես, օրինակ, Վենեսուելայի վրա, այդ երկրի նախագահին գողանում ու հայտարարում, որ պատերազմը դադարեցրիր: Այս իմաստով Կանադան եւ Գրենլանդիան ուղղակի հիասթափեցրին Թրամփին: Ոչ մի մարտական գործողություն, ոչ մի դիմադրություն… Այլապես ԱՄՆ նախագահը կարող էր իր ակտիվում եւս երկու խաղաղարար գործողություն գրանցել:

Ինչեւէ, հերթն Իրանի հետ պատերազմինն է: Թրամփն արդեն հայտարարել է, որ Իրանի հետ կարող է համագործակցել նավթային հարցում: Մնում է՝ մի հատ էլ Նեթանյահուին համոզի, որ Իրանի միջուկային ծրագիրը միանգամայն խաղաղ նպատակներ է հետապնդում: Նա ուղղակի չէր հաշվարկել, որ Իրանի դեմ պատերազմն այնքան կխորանար, որ անգամ Հյուսիսային Կորեան կխառնվեր: Կիմ Չեն Ընը պատրաստակամություն է հայտնել՝ միջմայրցամաքային հրթիռներով օգնել Իրանին, եթե այդ երկրի ղեկավարությունը դիմի իրեն: Իսկ սա արդեն լուրջ է, եւ Թրամփը, որպես ԱՄՆ ժողովրդի անվտանգության երաշխավոր, պետք է շտապի դադարեցնել Իրանի դեմ պատերազմը, քանի դեռ հյուսիսկորեական հրթիռները չեն պայթել Ազատության արձանի մոտակայքում:

Թրամփի խաղաղարար առաքելությանը Նեթանյահուից ոչ պակաս խոչընդոտում է նաեւ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին: Սա անընդհատ բզբզում, ճգճգում է Պուտինի հետ խաղաղության պայմանագրի ստորագրումը, որի հիմքում ԱՄՆ-ի առաջարկներն են. տարածքային զիջումներ Ռուսաստանին՝ հանուն ԱՄՆ-ի կողմից Ուկրաինայի հազվագյուտ մետաղների հանքավայրերի շահագործման: Ու այնպես էլ չէ, որ Զելենսկին հերոսաբար է դիմադրում: Նա հանքերն արդեն հանձնել է ԱՄՆ-ին, պարզապես ուկրաինացիներն են դեմ տարածքները Ռուսաստանին հանձնելուն: Մնում է մի քիչ էլ սպասել, որ Թրամփն ամերիկա-իրանական պատերազմը դադարեցնի եւ անցնի ռուս-ուկրաինական պատերազմը դադարեցնելուն:

Մեր բախտը, կարելի է ասել, բերեց: Այն, ինչ տասնամյակներ շարունակ չէր հաջողվում ԵԱՀԿ Մինսկի խմբին, Թրամփը միանգամից գլուխ բերեց: Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատումը Թրամփի խաղաղարար գործունեության մարգարիտը կարելի էր համարել, եթե չլիներ «Մադուրո» կայծակնային օպերացիան: Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները, առանց ձեռնաշղթաների, 2025թ. օգոստոսի 7-ին հասան Վաշինգտոն, իսկ 8-ին արդեն ստորագրեցին (նախաստորագրեցին) Թրամփի թուղթը: Ինչպես ասում են՝ շնորհքի հարց է: Բայց Թրամփը Թրամփ չէր լինի, եթե բավարարվեր Հայաստանի հաշվին Ադրբեջանի երկու մասերն իրար կապող միջանցքի անվանումով միայն (TRIPP): Գործարարի հոտառությունը նրան այնքան հեռու տարավ, որ, նախ, 80 տոկոս մտավ Հայաստանի շահի մեջ, ապա՝ միջանցքի կառուցման ծախսերը դրեց Ադրբեջանի վրա: Այսքանից հետո, խաղաղության հարթակում, Թրամփին մնում էր հայտարարել, որ Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարներն այլեւս եղբայրներ են:

Որ Հայաստանի եւ Ադրբեջանի գործող ղեկավարները եղբայրներ են, դա ճիշտ է, բայց ես խիստ կասկածում եմ, որ նրանց եղբայրությամբ ավարտվում է հայ-ադրբեջանական պատերազմը: Թնդանոթները, այո, միառժամանակ լռեցին, բայց դրանք արդյոք կշարունակե՞ն լռել, եթե Իսրայելը չդադարեցնի Իրանի դեմ չավարտված պատերազմին նոր մասնակիցներ ներգրավելու փորձերը: Իսկ եթե Նախիջեւանից հետո, Աստված չանի, ռումբեր պայթեն նաեւ Սյունիքում, եւ հայտարարվի, որ դա իրանական անօդաչուներն են արել, ո՞վ է պարզելու, ո՞վ է ապացուցելու, որ դա Ադրբեջանում տեղակայված իսրայելական բազաների գործը չէ: Բայրամովի մեկ հատիկ զանգը Միրզոյան Արոյին բավարո՞ւմ է՝ մեզ համոզելու, որ հարձակումն Ադրբեջանի կողմից չի եղել: Էլ չեմ խոսում այն մասին, որ Թուրքիան էլ այն կողմից կարող է «օգնության» հասնել Ալիեւին ու նրա

«հարազատ եղբորը»՝ վերջնականապես փակելով Իրանի հյուսիսում «բուֆերային» գոտի ստեղծելու հարցը (Սիրիան՝ մեզ օրինակ):

Եվ ահա թե ինչ եմ առաջարկում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին: Պարոն Թրամփ, քանի դեռ ուշ չէ, ամեն ինչ արեք՝ Իրանի դեմ պատերազմը դադարեցնելու համար: Այլապես ստիպված կլինեք խաչ քաշել խաղաղարարի Ձեր «մասնագիտության» վրա եւ դառնալ աշխարհի երեսից Արցախի ու Հայաստանի վերացման թիվ 1 մեղավորը: Ի դեպ, պարոն Թրամփ, Ալիեւի «եղբայրը», որին Դուք այնքան սիրում եք, ժամանակին հայտարարել է, որ կամ ինքը կլինի վարչապետ, կամ Հայաստանը վարչապետ չի ունենա: Դուք կուզենայի՞ք դառնալ նրա հրեշավոր ծրագիրն իրականացրած ձեռքը…

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՈՒԿՐԱԻՆԱ

ԿՐԵՄԼԸ ՆԱՎԹԻ ԳՆԵՐԻ ԱՃԻ ՀԵՏ Է ՀՈՒՅՍԵՐ ԿԱՊՈՒՄ

«Հրապարակի» զրուցակիցն Ուկրաինայի նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի (ՌՀԱԻ) փոխտնօրեն, արտաքին հետազոտությունների կենտրոնի ղեկավար **Մաքսիմ Պալամարչուկն** է:

- Ուկրաինան անօդաչու թռչող սարքեր եւ ռազմական խորհրդատուների խումբ է ուղարկել՝ Հորդանանում ամերիկյան ռազմական բազաները պաշտպանելու. այս մասին New York Times-ին տված հարցազրույցում հայտարարել է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին՝ նշելով, որ նման խնդրանքով Կիեւին դիմել է ԱՄՆ-ն: Ավելի քան 4 տարի պատերազմի մեջ գտնվող եւ համաշխարհային հանրության, այդ թվում՝ Վաշինգտոնի ռազմական աջակցությանն ապավինվող Ուկրաինան այդքան ռեսուրս ունի՞:

- Ուկրաինան իր օգնությունն է առաջարկել Մերձավոր Արեւելքում իր գործընկերներին՝ անօդաչու սարքերի հարձակումները հետ մղելու հարցում: Անօդաչու թռչող սարք-որսիչների արտադրությունն Ուկրաինայում զարգացել է Ռուսաստանի՝ հատկապես քաղաքացիական ենթակառուցվածքների դեմ ուղղված հարձակումներից երկիրը պաշտպանելու անհրաժեշտությունից ելնելով: Հենց այս ոլորտում ուկրաինական արդյունաբերության ներուժը նույնիսկ որոշ չափով ավելին է պահանջարկից: Նման համակարգերի արտահանման թույլտվության սահմանափակումն ընդունվել է նախքան ներկայիս զինված հակամարտության սկիզբը: Հնարավոր է՝ խոսք գնա ուկրաինական անօդաչու որսիչների՝ ամերիկյան «Պատրիոտ» ՀՕՊ համակարգերի զենիթահրթիռների հետ փոխանակման մասին: Այդպիսով Ուկրաինան կկարողանա իր արտադրած պաշտպանական սպառազինությունը փոխանակել իրեն անհրաժեշտ ներմուծվող զինատեսակների հետ:

- Իսկ արդյոք սա չի՞ նշանակում, որ Ուկրաինան միանում է Իրանի դեմ իսրայելա-ամերիկյան ռազմական գործողությանը: Նույն Իրանի, որի դեմ Կիեւը հին հաշիվներ ունի՝ Ռուսաստանի հետ պատերազմում Թեհրանի աջակցության մասով մեղադրանքների հետ կապված («Շահեդ» ԱԹՍ-ների առաքումներ եւ այլն...):

- Ուկրաինայի կողմից հնարավոր սահմանափակ օգնությունը գործընկերներին՝ Իրանի հարձակումները հետ մղելու հարցում, չի կարելի դիտարկել որպես ԱՄՆ-ի եւ Իսրայելի ներկայիս ռազմական գործողության մասնակցություն: Ուկրաինան իրականացնում է իր ազգային շահերը՝ համագործակցելով գործընկերների հետ: Պետք է նաեւ նշել, որ խոսքը միայն ԱՄՆ-ի մասին չէ, այլ նաեւ՝ Պարսից ծոցի պետությունների, որոնց հետ երկկողմ հարաբերություններն ակտիվորեն զարգանում են արդեն մոտ մեկ տասնամյակ:

- Մյուս կողմից, Ուկրաինային որոշակի աջակցություն ցուցաբերող Ադրբեջանն է պնդում, թե Իրանը հարձակվել է իր տարածքի վրա: Նույնպիսի մեղադրանք հնչեցրեց նաեւ Թուրքիան, որը եւս ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորման միջնորդական քայլեր է իրականացնում: Ստացվում է՝ Իրանի դեմ պատերազմում նաեւ ռուսական գործո՞ն է կարեւոր. Ադրբեջանը Կրեմլի դեմ եւս մեղադրանքներ ունի:

- Հավանաբար, ԱՄՆ-ի՝ Իրանին հարվածներ հասցնելու որոշումն ուղղակիորեն կապված չէր ռուսական գործոնի հետ, սակայն գործողության միջանկյալ հետեւանքները, օրինակ՝ նավթի գների բարձրացումը, ավելի շուտ ձեռնտու են Ռուսաստանի Դաշնությանը: Իրանի հարձակումները հարեւան պետությունների վրա, այդ թվում՝ Ադրբեջանի, ցույց են տալիս ներկայիս իրանական վարչակարգի ագրեսիվ բնույթը:

- Այս պատերազմական քառսում մի՞թե ճիշտ է, որ Կիեւն աջակցում է ԱՄՆ-ին՝ ավելի շեղելով Թրամփի վարչակազմի ուշադրությունը ռուս-ուկրաինական հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացից, որը նույն Իրանի շուրջ իրավիճակի պատճառով դադարեցվել է, այդ մասին անգամ նախագահ Զելենսկին է խոստովանել: Թե՞ ԱՄՆ-ին մերժելու գինն ավելի ծանր կարող է լինել:

- ԱՄՆ-ի՝ Իրանի դեմ գործողություն սկսելու, դրա ձեւաչափի եւ ավարտի ժամանակի վերաբերյալ որոշումները որեւէ կերպ կախված չեն Ուկրաինայի կողմից աջակցության լինելուց կամ չլինելուց: Թեպետ Իրանի հարձակումների պատճառով Ռուսաստանի կողմից Ուկրաինայի դեմ պատերազմի ավարտին ուղղված բանակցությունների հերթական հանդիպման վայրը փոխվել է, սպասվում է, որ բանակցային գործընթացը կվերսկսվի այս շաբաթ: Միեւնույն ժամանակ, իմ կարծիքով, ներկայում էական առաջընթաց ունենալու հավանականությունը քիչ է: Մի կողմից՝ ռուսական ղեկավարության համար ավելի է բարդանում պատերազմի առավելապաշտպանական նպատակներից հրաժարվելը: Ռուսաստանի ցանկացած զիջում՝ Վենեսուելայի պես դաշնակից կորցնելու եւ Իրանին օգնություն ցուցաբերելու հնարավորություն չունենալու պայմաններում, կարող է ներքաղաքական բացասական հետեւանքներ ունենալ: Մյուս կողմից՝ նավթի վաճառքից եկամուտների հնարավոր աճը Կրեմլին հույս է տալիս, որ դեռեւս որոշ ժամանակ կկարողանա պահպանել պատերազմի ֆինանսավորումը:

Արա ԱԼՈՅԱՆ

ԻՆՉ ԴԵՐ Է ԽԱՂԱԼՈՒ ՎՐԱՍՏԱՆԸ ՀՀ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Անցյալ շաբաթ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը երկօրյա աշխատանքային այցով մեկնեց Վրաստան: Առաջին հայացքից դա ոչնչով աչքի չընկնող իրադարձություն է, առավել եւս՝ որեւէ կերպ սենսացիոն իրադարձություն համարել չի կարելի: Ի վերջո, Երեւանի եւ Թբիլիսիի միջեւ չկան սուր հակասություններ: Հայաստանն այսօրվա դրությամբ ունի երկու բաց սահման՝ Իրանի եւ Վրաստանի հետ: Իրանը ռեգիոնում դիտարկվում է որպես կայունության ու անդորրի բալանսն ապահովող ուժ: Իսկ Վրաստանը պարզապես հանգիստ եւ խաղաղ հարեւան-բարեկամ երկիր է: Սակայն, ամեն դեպքում, այդ այցն ուշադրության արժանի է՝ գրում է ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը եւ հիշեցնում, որ 2024 թվականի հունվարին Վրաստանն ու Հայաստանը ռազմավարական գործընկերության համաձայնագիր են ստորագրել, եւ երկուստեք թերեւս կար ցանկություն՝ այդ ձեւը բովանդակությամբ լցնելու:

Տեղի ունեցավ Հայաստանի եւ Վրաստանի վարչապետների հանդիպումը, իսկ Սիգնախիում անցկացվեց հայ-վրացական տնտեսական համագործակցության հարցերով 15-րդ միջկառավարական հանձնաժողովի նիստ: Երկկողմ օրակարգը, նաեւ հաշվի առնելով ներկայում ռեգիոնում տիրող անհանգիստ վիճակը, բավականին մեծ է, եւ այս այցելությամբ բոլոր հարցերը սպառել հնարավոր չէ, սակայն, այցի հետ կապված եւ այցի ընթացքում Փաշինյանի արած հայտարարություններում հնարավոր չէ չզգալ նախընտրական շրջանին հատուկ նոտաներ: Օրինակ այն, որ Փաշինյանը շեշտում է, թե Վրաստանի աջակցությունը զգում են Հայաստանի եւ Ադրբեջանի հետ երկկողմ առեւտրատնտեսական կապերի զարգացման հարցում: Նա նաեւ շեշտել է, որ Հայաստանի անկախացումից ի վեր Ադրբեջանի տարածքով ոչ մի գնացք չի անցել, միայն Վրաստանի տարածքով են գնացքներն անցել, իսկ հիմա անցնում են թե՛ Ադրբեջանի տարածքով, թե՛ Վրաստանի: Իհարկե, սրանք սոսկ նախընտրական հայտարարություններ չեն, ըստ Մարկեդոնովի, սակայն կարելի է համարել, որ, ըստ էության, Հայաստանը սկսել է ամբողջովին ապրել նախընտրական օրակարգով: Հատկապես, որ հունիսի 7-ին կայանալիք ընտրություններում խաղաղության, համագործակցության եւ Հայաստանի՝ ռեգիոնալ հանգույց դարձնելու թեմաները դառնալու են ՔՊ-ի ծրագրային առաջնահերթ թեզիսները: Մարկեդոնովի տպավորությամբ՝ Նիկոլ Փաշինյանն ընտրողներին ամեն կերպ ուզում է ցույց տալ, որ բոլոր առաջնորդները՝ թե՛ հարեւան երկրների, թե՛ մեծ տերությունների, այսպես թե այնպես, իրեն աջակցում են: Դա ուզում է ներհայաստանյան կյանքում որպես ազդակ ծառայեցնել, որ այլ ուժեր ու այլընտրանքներ նրանց կողմից չեն դիտարկվում՝ ամփոփում է ռուս քաղաքագետը:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Իրանական պատերազմը կբերի սննդամթերքի թանկացման

Մերձավոր Արեւելքում իրավիճակի ներկայիս էսկալացիան կարող է բերել ոչ միայն էներգակիրների, այլ նաեւ՝ սննդամթերքի թանկացումների,- գրում է Corriere della Sera պարբերականը: Գնաճի պատճառ կարող է լինել պարարտանյութերի դեֆիցիտը, քանի որ դրանց 15 տոկոսը համաշխարհային շուկա մուտք էր գործում այդ ռեգիոնից: Համաձայն հոդվածի, Պարսից ծոցի ավազանի երկրները պարարտանյութերի արտադրության ծավալով աշխարհում գրավում են երկրորդ տեղը (14,4 տոկոս)՝ համաշխարհային ընդհանուր ծավալում, զիջելով միայն Ռուսաստանին, որի մասնաբաժինը կազմում է 22,4 տոկոս: Ընդ որում, Ծոցի ավազանի երկրներում արտադրված պարարտանյութերի մեծ մասի փոխադրումն իրականացվում էր Հորմուզի նեղուցով, որտեղ նավագնացությունը ներկայում փաստացի դադարեցված է: Այդ ռեգիոնում արտադրված պարարտանյութերի հիմնական գնորդներն են՝ Հնդկաստանը, Միացյալ Նահանգները, Բրազիլիան եւ Ավստրալիան: Պարբերականը նաեւ հայտնում է, որ պարարտանյութերի մի շարք տեսակներ արդեն 26 տոկոսով թանկացել են: Ու սա՝ այն դեպքում, երբ ռեգիոնում պատերազմը դեռ մի շաբաթ է, ինչ ընթանում է: Ազոտական պարարտանյութերն արդեն, անցյալ տարվա դեկտեմբերի համեմատությամբ, թանկացել են 64 տոկոսով: Եթե պարարտանյութերի թանկացումը համադրենք էներգակիրների թանկացման հետ, ապա կասկածից վեր է, նշվում է հրապարակման մեջ, որ կթանկանան նաեւ պարենային ապրանքները, ինչն ավելի կսրի պարենային ապահովվածության վիճակը հատկապես չքավոր երկրների համար:

ԱՅՍՕՐ ՈՒՆԵՆՔ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ՈՐՈՆՔ ԸՆԴԱՄԵՆԸ 80-90 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ

*Կրթության փորձագետ **Սերոբ Խաչատրյանի** հետ զրուցել ենք կրթական համակարգում առկա բացթողումների ու չկշռադատված կարգավորումների մասին:*

- Կառավարությունը կրթության ոլորտում անկանոն փոփոխություններ է կատարում՝ օրենքն ընդունում են, փորձարկում, հետո նորից վերադառնում նախկինին. դպրոցն ու ուսուցիչը փորձադաշտ են, աշակերտն էլ՝ փորձաճագար:

- Այո, վերջին տարիներին օրենսդրական փոփոխությունները շատ-շատ են եւ, այսպես ասած, հաճախ տրամագծորեն տարբեր: Ես ամենաթարմ օրինակը բերեմ. մինչեւ վերջերս մեզ համոզում էին, որ դպրոցներում պետք է անբավարար թվանշան չլինի, որ բոլոր թվանշանները, որոնք երեխաները ստանում են, լինեն 10, 8 թե 1, համարվում են դրական, եւ տեղափոխվում են հաջորդ դասարան: Իսկ ովքեր փորձում էին ընդդիմանալ այս որոշմանը, նրանց մեղադրում էին հետամնացության, սովետական մտածողության մեջ եւ այլն: Բայց ինչ տեղի ունեցավ. այս որոշումն ընդունելուց կարճ ժամանակ անց նախարարությունը՝ հենց իրենք ետ բերեցին բացասական թվանշան նշանակելու իրավունքը: Ինչու: Երբ դու ասում ես՝ չկա բացասական թվանշան, այդ դեպքում երեխան անպատրաստ է գալիս դպրոց. դաս ես հարցնում՝ նա պատրաստ չէ: Ստանում է 1, հաջորդ օրն էլ՝ 1… եւ այսպես տեղափոխվում է հաջորդ դասարան: Դա՝ դեռ ոչինչ, եթե երեխան չսովորող է, գիտենք, որ թվանշանն էլ չի մոտիվացնի: Բայց պետք է հետեւի, մտահոգվի դրանով:

- Դա շատ լուրջ հարց է: Մենք այդ մասին չենք խոսում, բայց մեծ գումարներ ենք ծախսում այս թեմայի վրա՝ կրթությունից դուրս մնացած երեխաներին դպրոց վերադարձնել: Բազմաթիվ երեխաներ կան, որոնք գնում են ավագ դպրոց կամ քոլեջ, որտեղից որոշ ժամանակ հետո հանում են բացակայությունների պատճառով, վատ վարքագծի պատճառով, եւ այս երեխաները մնում են օդում: Այսօր կան բազմաթիվ երեխաներ, որոնք դպրոց չեն գնում՝ ավագ դասարաններ, եւ ոչ մի դպրոցում գրանցված չեն: Գնացել է մի քոլեջ, որտեղից հեռացրել են, եւ վերջ: Ինքը հիմա փողոցում ման է գալիս կամ տանը նստած է: Ոչ ոք չի տեսնում այդ երեխային: Հիմա հարց. ինչպե՞ս է հնարավոր, երբ այսքան ռեֆորմ է արվել, անընդհատ խոսվում է կրթությունից դուրս մնացած երեխաների մասին, ինչու չենք տեսնում այդ երեխաներին: Հաճախ, երբ մենք Սեւանի մայրուղով գալիս ենք Երեւան, ծաղիկներ են առաջարկում. դրանց մեծ մասը դպրոցականներ են: Եթե գնաք Հայաստանի հանգստավայրեր, այնտեղ հյուրանոցներում, սրճարաններում աշխատում են երեխաներ՝ դասերի ժամին: Ոչ ոք չի ասում՝ այս երեխան դասերի ժամին ինչու է մատուցող աշխատում: Մենք նաեւ ունենք երեխաներ, որոնք գրանցված են թղթի վրա, բայց փաստացի դպրոց չեն գնում: Ով էլ գնում է, հաճախ կիսատ-պռատ է դաս անում: Եվ այս վիճակը դոմինոյի էֆեկտով հարվածում է համալսարաններին: Երբ երեխան 10-12-րդ դասարաններում նորմալ չի սովորում, ետ է վարժվում: Իսկ երբ գալիս է համալսարան, իրենից պահանջում են, որ գիտական, ակադեմիական գրքեր կարդա: Ինքը սովոր չէ դրան, չի հիշում, թե երբ է վերջին գիրքը կարդացել, էլ ո՞նց կարող է հաստափոր գիրք կարդալ:

- Բոլոր դպրոցներն անցնում են նախարարության ենթակայության տակ, այլեւս մարզպետարաններն ու համայնքապետարանները չեն համակարգելու տարածքի կրթական ոլորտը: Ճի՞շտ մոտեցում է, հնարավո՞ր է մի կետից լիարժեք համակարգել հանրապետության ողջ կրթական կյանքը:

- Իհարկե՝ ոչ, կենտրոնացումը շատ մեծ ռիսկեր ունի: Ընդհանրապես, կրթական համակարգի կենտրոնացումը սխալ է այն իմաստով, որ Երեւանում գտնվող նախարարությունը չի կարող Երեւանից 1400 դպրոց կառավարել ամբողջ Հայաստանում, որովհետեւ շատ խնդիրներ կան, որ պետք է լուծի տեղերում գտնվող մարդը: Մենք փակեցինք Կրթության ազգային ինստիտուտի մասնաճյուղերը, տեսչությունը մասնաճյուղերում այլեւս չունի ներկայացուցչություններ: Հիմա էլ մարզպետարաններն են գնում մարման կամ փակման՝ կրթության մասով: Ամեն ինչ կենտրոնացվում է Երեւանում, բայց արդյո՞ք Երեւանում նստած մարդը կկարողանա արդյունավետ կառավարել Սյունիքում դպրոցը: Ես հստակ կասկածներ ունեմ: Եվ սա տանելու է մարզի դատարկման, քանի որ մարզում ոչ մի կրթական աշխատանք չկա. կրթության վարչությունները փակում են, դպրոցների թիվը՝ պակասեցնում: Եթե Սյունիքում 40-ից ավելի դպրոց փակվում է, դա ինչ է նշանակում, որ մարզում 40-ից ավելի դպրոցի տնօրենի, ուսմասվարի, ուսուցիչների եւ այլ աշխատատեղեր կպակասեն: Դրան գումարած՝ մարզպետարանների աշխատողների թիվը, նաեւ՝ համալսարանների: Այսինքն, Սյունիքի մարզում ինտելեկտուալ մարդկանց պակաս կառաջանա: Վերջերս ընդունվեց ակադեմիական քաղաքի հայեցակարգը, եւ անհասկանալի է, թե ինչ է լինելու մարզերի համալսարանների հետ: Որովհետեւ ոչինչ չի ասվում այդ համալսարանների մասին, կարող են նաեւ փակվել: Խոսվում է միայն Երեւանի համալսարանների մասին: Սա էլ մի ուրիշ խնդիր է, որովհետեւ բերելու է համալսարանների գետտոյացման: Եվ հիմա, որ տեսնում ենք ԱՄՆ-Իսրայել-Իրան պատերազմը, ինչքանո՞վ է ճիշտ Հայաստանի ինտելեկտուալ պոտենցիալը, այսինքն՝ առաջատար բուհերը եւ գիտական հաստատությունները տանել դնել մի տեղում: Դա պատերազմական տեսանկյունից ռիսկ չե՞ մի: Ես կարծում եմ, որ մենք պետք է ցրենք մեր ինտելեկտուալ պոտենցիալը եւ ուժեղացնենք տեղերում. մի ուժեղ համալսարան ձեւավորենք Սյունիքում, մեկը՝ Շիրակում, մյուսը՝ Լոռիում: Ինչ պարտադիր է, որ դրանք լինեն մեկ տեղում: Եթե լավ պայմաններ ապահովեն, մարդիկ սիրով կգնան եւ կաշխատեն այդ տեղերում:

- Իսկ դասագրքերի հետ կապված ինչ խնդիրներ կան: Արդյո՞ք ճիշտ է սմարթֆոնների օգտագործման արգելքը դպրոցներում:

- Դասագրքերի հարցը շատ խառն է: Մի քանի լավ դասագիրք, կարծում եմ, ստացվել է, բայց հիմնականում դասագրքերը շատ հակասական են, գրված են ոտքի վրա, հապճեպ, շատ ցածր ֆինանսավորմամբ: Եվ դասագրքերի այս նոր փուլը, ոչ բոլորը, բայց մեծ մասամբ ձախողված է: Ես հեղինակներին չեմ մեղադրում, որովհետեւ կանոններն այնպիսին էին, որ մարդիկ ոտքի վրա էին գրում եւ կարող էին անգամ զավեշտալի սխալներ թույլ տալ: Ինչ վերաբերում է սմարթֆոններին, դրանք դասերի ժամանակ պետք է միանշանակ արգելվեն, որովհետեւ շեղում են եւ անմեղ բաներ չեն: Բայց դրանք արգելելը, սոցցանցերի եւ այլն, դա արդեն մի քիչ վիճելի հարց է:

- Դպրոցներում մեծ քանակով հատկապես տնօրենների թափուր տեղեր կան. ինչ սկզբունքով է ընտրությունը կատարվում:

- Դա շատ լուրջ հարց է, որովհետեւ նախարարությունն ամբողջությամբ փոխեց մրցույթի կարգը, եւ արդյունքում մենք հիմա ունենք դպրոցներ, որտեղ 2-3 տարի է՝ տնօրեններ չկան: Դպրոցը կառավարում է կամ պարտականությունները կատարող ինչ-որ մարդ, կամ ժամանակավոր պաշտոնակատար, եւ երկուսն էլ կարող են հավաստագիր չունենալ: Ո՛չ վերապատրաստում են անցել, ո՛չ էլ անգամ ուզում են ղեկավարել դպրոցը: Բայց մենք դպրոցը հանձնում ենք այս մարդկանց՝ առանց օգնելու, խորհուրդներ տալու, եւ երկար ժամանակ դպրոցն անորոշության մեջ է կառավարվում: Բացի այդ, մի խնդիր էլ կա, որ տնօրեններին որոշելն անցկացվում է փակ: Որոշումը կայացնում են միայն պետական պաշտոնյաներ, հասարակությունը չի իրազեկվում, թե այդ որոշումները ոնց են կայացվում: Արդյոք ինչ-որ մարդկանց դեպքում քաղաքական կողմնորոշումները հաշվի առնվո՞ւմ են, թե՝ ոչ: Չգիտենք՝ փակ է: Մի կողմից, մենք քարոզում ենք ժողովրդավարություն, մյուս կողմից՝ փակ ձեւով դպրոցի տնօրեն ընդունում:

- Ատեստացիա կոչվածն ինչ արդյունք է տալիս, քանի՞ ուսուցիչ է դուրս մնացել դպրոցից, եւ քանի՞սն է 700 հազար դրամ աշխատավարձ ստանում:

- Դուրս պետք է մնային, բայց նախարարությունն էլի փոխեց իր կարգավորումը: Սա էլ է արդյունք, որ մի բան որոշել էին, բայց հիմա ուրիշ բան են անում: Ատեստավորման արդյունքում, այո, կան 700 հազար ստացողներ, բայց պետք է նշենք, որ դրանք մեկուկես դրույքով աշխատող ուսուցիչներ են: 30 ժամ, ուսուցիչ գիտեմ, որ շաբաթը 33 ժամ դաս է տալիս: Այսինքն՝ օրը 7 ժամ: Դա էլ է խնդիր, արդյո՞ք ուսուցիչը կարող է արդյունավետ աշխատել՝ օրը 7 ժամ դասավանդելով: Բայց դրանց թիվը շատ քիչ է: Մենք ունենք դասավանդողների շատ մեծ թիվ, այսօր դասարան է մտնում 38 հազար մարդ, որոնցից 30 հազարն ուսուցիչներ են, 8 հազարը՝ դասավանդողներ, այսինքն, վարչական աշխատողներ, բայց դաս են տալիս, օրինակ՝ տնօրենը: 38 հազարի մոտավորապես 9 հազարն է ստանում բարձր աշխատավարձ: Բարձր ասվածն էլ շատ հարաբերական է: Ոմանց աշխատավարձը 200 հազար է՝ հարկերը մեջը, բայց կան 700 հազար ստացողներ էլ: Այստեղ, իհարկե, ուրիշ խնդիր է առաջանում. աշխատավարձերի բարձրացումը՝ կամավոր ատեստավորումը, հաճախ տեղի է ունենում մյուսների աշխատավարձը չբարձրացնելով: Այսինքն, պետությունն ասում է՝ ես կբարձրացնեմ միայն նրանց աշխատավարձը, ովքեր այդ թեստը կհանձնեն, ով չի հանձնում, հույս չունենա, որ կբարձրանա: Սա էլ է խնդիր: Մենք այսօր Հայաստանում ունենք ուսուցիչներ, որոնք, հարկերը հանած, ստանում են 80-90 հազար դրամ աշխատավարձ:

- Ընտրական գործընթացում միշտ ընդգրկված են ուսուցիչներ, տնօրեններ, իսկ կրթօջախն ապաքաղաքական հաստատություն է: Ինչպե՞ս զերծ պահել դպրոցն այդ ներգրավումից:

- Ցավոք, գնալով շատանում են իշխող կուսակցության անդամ տնօրենները: Եթե 2018 թ. ես չէի ճանաչում ՔՊ անդամ դպրոցի տնօրենի՝ չկար, այսօր առնվազն 10-15 հոգու ճանաչում եմ: Բազմաթիվներին էլ չեմ ճանաչում, քողարկված են: Այս տենդենցը շարունակվում է: Այսինքն, տնօրենները նախկին համակարգից դաս չեն քաղել, էլի փորձում են մտնել իշխող կուսակցության մեջ: Ես խորհուրդ կտամ՝ դա չանել: Մենք տեսանք, թե ինչ դժվար վիճակում հայտնվեցին իրենք 2018-ին: Եթե այսօր բոլորս մտնում ենք իշխող կուսակցություն, մի օր էլ այս իշխանությունն է գնալու, ինչ ենք անելու: Հաճախ նախաձեռնությունները գալիս են ներքեւից, իրենք են ուզում մտնել իշխող կուսակցություն: Վերեւից չկա սիստեմատիկ պարտադրանք, որ պետք է ՔՊ մտնեք, ինչպես նախկինում՝ ՀՀԿ, բայց թիվը մտահոգիչ է, աճում է:

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԱՔՐԵԼԸ ՔԻՉ Է. Ո՞Վ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՆԳԻՍՏԸ ՄԵՐ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Զուլագործ Արսենը, նրա կինը եւ երկու երեխաները կիրակնօրյա հանգիստն անցկացնելու մասին էին մտածում: Օրը շոգ էր, սպասում էին երեկոյին, որ գնան քաղաքային զբոսայգի. այնտեղ միշտ զով է, ծառախիտ, եւ ընտանիքով կարելի է հաճելի ժամանակ անցկացնել:

Զբոսայգու հայտարարությունների ցուցանակից երեխաներն արդեն տեղեկացել էին, որ այդ օրը հերթական հետաքրքիր միջոցառումն է սպասվում. նկարչական դպրոցի սաներն էին իրենց ստեղծագործությունները ներկայացնելու, երաժշտական խմբերն էին կատարումներով հանդես գալու, վերջում՝ բաց երկնքի տակ պատմական ֆիլմի ցուցադրություն էր լինելու: Ընտանիքը պատրաստվում էր դուրս գալ տնից, երբ հնչեց հեռախոսը: Արսենի ընկերն էր՝ նույնպես ձուլագործ, առաջարկում էր ընտանիքով գնալ իրենց թաղամասի փոքրիկ պուրակը, որտեղ գործում էր բակային ճամբար: Թաղի երեխաները թատրոնի դերասանների հետ բեմադրում էին փոքրիկ ներկայացումներ՝ Հովհաննես Թումանյանի եւ Խնկո Ապոր ստեղծագործությունների հիման վրա: Նախատեսված էր նաեւ ասմունքի մրցույթ, որին մասնակցելու էին թե մեծերը, թե փոքրերը:

Հավանաբար, դուք մտածեցիք, թե լրագրողը հեքիաթ է պատմում, սակայն սա մեր ոչ այնքան հեռավոր անցյալի մասին է: Մեր զբոսայգիներում, պուրակներում, հանգստյան գոտիներում նման միջոցառումները ոչ թե բացառություն էին, այլ՝ բնական երեւույթ: Այդ ժամանակ զբոսայգիները միշտ մարդաշատ էին՝ բարեկարգ, կանաչ, զով եւ, ամենակարեւորը՝ քաղաքային կյանքի մշակութային կենտրոններից մեկը: Մարդիկ ոչ միայն հանգստանում էին, այլ նաեւ՝ հաղորդակից դառնում մշակույթին ու արվեստին: Երգ, պար, ասմունք, ցուցահանդեսներ, գրական երեկոներ, ֆիլմերի ցուցադրություններ, եւ ստեղծվում էր միջավայր, որտեղ քաղաքացին ոչ միայն հանգստանում էր, այլեւ՝ գեղագիտական հաճույք ապրում: Նման միջոցառումների շնորհիվ դպրոցականները կարդում էին, անգիր գիտեին բազմաթիվ ստեղծագործություններ:

Անկախությունից հետո, ցավոք, այս մշակույթը վերացավ մեր առօրյայից: Զբոսայգիների մի մասն ամայացավ, մյուսները դարձան պարզապես նստելու վայրեր: Իսկ գուցե ինչ-որ համայնքներում դեռ պահպանվել է այդ ավանդույթը, քաղաքային այգիների մշակութային կյանքը: Այս հարցերի պատասխանները պարզելու համար հարցում ուղարկեցինք Լոռու մարզի մի շարք համայնքների ղեկավարներին, թե ինչ աշխատանքներ են կատարվել զբոսայգիների եւ պուրակների մաքրման, բարեկարգման, կանաչապատման ուղղությամբ, ինչ ծրագրեր են նախատեսվում՝ քաղաքացիների հանգիստն ու ժամանցը կազմակերպելու համար: Հետաքրքրվել էինք, թե ով է պատասխանատու այդ տարածքների պահպանության համար, ինչ աշխատանքներ են կատարվել վերջին տարիներին, ինչ վերահսկողական մեխանիզմներ են գործում, ինչ միջոցառումներ են նախատեսվում:

Կարճ ժամանակ անց ստացանք 3 համայնքների պատասխանները՝ Ալավերդուց, Ստեփանավանից, Սպիտակից: Պատասխանները, մեղմ ասած, հիասթափեցնող են, ավելի շատ հիշեցնում են ձեւական հաշվետվություն: Օրինակ՝ Ալավերդի համայնքից նշում են, որ զբոսայգիների պահպանությունն իրականացնում են համապատասխան համայնքային կազմակերպությունները, կառուցվել են խաղահրապարակներ եւ մարզահրապարակներ: Սակայն մեր հարցման կարեւոր մասը՝ քաղաքացիների հանգիստն ու ժամանցը կազմակերպելուն ուղղված կոնկրետ ծրագրերը, փաստորեն, մնացել է անպատասխան: Նշվում են միայն մաքրման, վերանորոգման կամ կանաչապատման աշխատանքներ:

Ստեփանավանից ստացված պատասխանում եւս խոսվում է տարածքների մաքրման, բարեկարգման, ծառատունկի մասին: Նշվում է, որ զբոսայգիներում կազմակերպվում են շոու ծրագրեր, պարային խմբերի ելույթներ, ցուցահանդեսներ: Սակայն կրկին առանց կոնկրետության՝ երբ, ինչ ձեւաչափով, ինչ հաճախականությամբ:

Սպիտակի պատասխանը կարճ է՝ 1-2 նախադասություն: Նշվում է միայն, որ զբոսայգում իրականացվում են շինաշխատանքներ, որոնց ավարտից հետո նախատեսվում է կազմակերպել մշակութային միջոցառումներ:

Այսինքն, համայնքապետարանների պատասխաններում հիմնականում ընդհանուր բնույթի տեղեկություններ են, չեն նշվում հստակ ծրագրեր, ժամկետներ, նախաձեռնություններ: Եթե մեր զբոսայգիները միայն մաքրվեն եւ բարեկարգվեն, բայց այնտեղ կյանք չլինի, մշակութային միջավայր չձեւավորվի, արդյո՞ք դրանք կդառնան լիարժեք հանգստի եւ ժամանցի կենտրոններ: Քաղաքային այգին պարզապես կանաչ տարածք չէ: Այստեղ կարող են հանդիպել սերունդները, կարող են ձեւավորվել մշակութային ավանդույթներ, կարող են առաջին քայլերն անել ապագա դերասանները, երաժիշտները կամ նկարիչները: Սա մեր քաղաքացիների կյանքի որակի հետ կապված հարց է: Սպասում ենք նաեւ Վանաձորի եւ Տաշիրի համայնքների պատասխաններին: Հուսանք, որ նրանց պատասխանները կլինեն ավելի ամբողջական, ավելի կոնկրետ եւ առավել պատասխանատու: Ակնկալում ենք նաեւ, որ Ալավերդու, Ստեփանավանի, Սպիտակի համայնքապետարանները կլրացնեն իրենց պատասխանները: Մեր քաղաքացիներն ընտրել են համայնքային իշխանություններ ոչ միայն ճանապարհներ նորոգելու կամ տարածքներ մաքրելու համար, այլ նաեւ քաղաքի հանրային կյանքը կազմակերպելու եւ զարգացնելու ակնկալիքով: Այդ կյանքի կարեւոր մասն են մեր զբոսայգիները եւ պուրակները:

Քաղաքային այգին պարզապես ծառերի եւ նստարանների հավաքածու չէ: Այն քաղաքային կյանքի հայելին է: Եվ եթե այդ հայելում կյանք չկա, ուրեմն պետք է իրական ծրագրեր իրականացնել, որովհետեւ քաղաքը միայն շենքերով չէ քաղաք, այլ՝ մարդկանցով: Իսկ մարդիկ պետք է ունենան նաեւ արժանապատիվ հանգստի եւ բովանդակալից ժամանցի հնարավորություն:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 10.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՉՍԻՐԵԼ ՈՉ ԹԵ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԼ ԱՊԱՇՆՈՐՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Երբ տեսնում ենք, թե ինչպես է այս իշխանությունն իրենից ոչ մի բանով չկախված խաղաղությունը՝ իշխանություն պահելու գնով Հայաստանի Հանրապետության քաղաքացու վրա վաճառում, երբ տեսնում ենք, թե ինչպես է ընդդիմությունը «Հայաստանի ու Ադրբեջանի՝ Ալմա-Աթայով հաստատված սահմանները ճանաչո՞ւմ եք, թե՝ ոչ» հարցին պատասխանելուց վախենում, միանգամից հասկանում ենք, թե ինչպես է լինում, որ երկրի այսօրվա քաղաքական դասն անգամ 2020-ի պատերազմից 6 տարի անց էլ չի հասկանում, որ այսօրվա խաղաղությունն Ադրբեջանի նվերը չէ Հայաստանին: Չի հասկանում, որ այդ խաղաղությունը հաստատվել է ոչ թե այն պատճառով, որ Ալիեւի պատկերացրածով խաղաղությունն է, այլ հաստատվել է, որովհետեւ տարածաշրջանում ձեւավորված ռազմաքաղաքական իրողություններն են այդպես դասավորվել:

Այս իմաստով մենք ու մեր նմանները, իհարկե, Նիկոլի ու նիկոլենց բերած Հայաստանը չենք սիրում: Բայց այդ չսիրելը ոչ թե պետությանն է ուղղված, այլ՝ այս իշխանություններին, որովհետեւ նրանց իշխանության գալով ու նրանց մեղքով է միայն, որ այսօրվա Հայաստանում չեն հասկանում՝ այս խաղաղությունը մեզ տրված չէ, որ մենք այն իշխանություն պահելու գնով երկրի վրա վաճառենք: Եվ այս պետությունը մեզ տրված չէ, որ մենք այն, Հայաստանի Հանրապետության եւ սփյուռքի հզորությունների բազմապատկման գործին ծառայեցնելու փոխարեն, ՀՀ քաղաքացու եւ սփյուռքի միջեւ բաժանենք:

Իհարկե, մեր ու մեր նմանների համար մինչեւ 2020-ը եղած Հայաստանում եւս շատ բաներ են եղել, որ մենք չենք սիրել: Բայց մեր այդ «չսիրված բաներն» ազատագրված Արցախի ու Արցախ ունենալու համեմատ այնքան աննշան ու անկարեւոր բաներ են եղել, որ մենք հիմա երբ հետ ենք նայում, հասկանում ենք, որ այն օրերի Հայաստանում եղած սխալների ու բացթողումների տասնապատիկն անգամ, հարյուրապատիկը մենք կտանեինք, միայն թե կարողանայինք չկորցնել այն, ինչը կորցրինք:

Բայց այդքան չսիրված բաների ու այդքան բաց թողնված հնարավորությունների մասին խոսելով հանդերձ, մենք ուզում ենք նաեւ արձանագրել, որ փոխարենը այսօր արդեն հասցրել ենք սիրել 2026-ի հունիսի 7-ը եւ հունիսի 7-ից հետո եկող Հայաստանը: Հասցրել ենք սիրել, որովհետեւ սկսել ենք հավատալ, որ այդ օրը Հայաստանի այն իշխանության ընտրվելու օրն է լինելու, որն իշխանության է գալու մի նպատակով, որ ոչ թե պետությունը միայն ՀՀ քաղաքացու պետություն դարձնի, այլ՝ բոլոր հայերի: Որն իշխանության է գալու ոչ թե խաղաղությունը Հայաստանի եւ նրա քաղաքացու վրա՝ իշխանություն պահելու գնով վաճառելու, այլ Հայաստանն ուժեղացելու: Որն իշխանության է գալու ոչ թե պարգեւավճարներ բաժանելու, այլ Հայաստանի տնտեսությունն արդյունաբերականացնելու, որն իշխանության է գալու ոչ թե երկիրը բանկերի երկիր դարձնելու, այլ բանկերին Հայաստանի տնտեսության արդյունաբերականացման «մասնակցություն պարտադրելու», որն իշխանության է գալու ոչ թե գյուղատնտեսության նախարարությունը ցրելու, այլ գյուղատնտեսության նախարարության ջանքերով՝ ժամանակակից գյուղատնտեսություն ստեղծելու, որն իշխանություն է վերցնելու ոչ թե բանակն անորակ սպառազինությամբ զինելու, այլ տեխնոլոգիական ռազմարդյունաբերություն հիմնելու եւ բանակը 21-րդ դարի բանակ դարձնելու համար:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am